



ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Մայիսի 9-ը՝ տարվա 129-րդ օրը եռափուն է մեզ համար. հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ նշում է 1945-ին Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հաղթանակի փոքր, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի սրբազան փառաբանները

Հայոց Ցեղասպանության 106-րդ տարելիցին նվիրված միջոցառում



Արմավիրի արվեստի պետական քոլեջի տնօրինությունը, դասախոսները և միջոցառման մասնակից ուսանողները

5

Անցկացվեց հայ կոմպոզիտորական արվեստի 12-րդ փառատոնը



9

Ալեքսանդր Սպենդիարյանի հիշատակի օրը՝ վարդաօուկ



Ներկաները ծաղիկներ խոնարհեցին և խնկարկեցին Ա. Սպենդիարյանի շիրիմին

2

Ա. Բաբաջանյանի եւ Կոնսերվատորիայի 100-ամյակը՝ ուսանողների եւ պրոֆեսիոնալ երաժիշտների համերգով



ԵՊԿ պրոֆեսոր Նարինե Զարիֆյանը և ուսանողները Արամ Խաչատրյան համերգասրահում

3

Առևտրային Բաբաջանյանի եւ Էդվարդ Միրզոյանի ծննդյան 100-ամյակներին նվիրված գիտաժողով կոնսերվատորիայում

ԵՊԿ պրոֆեսոր Շուշիկ Մովսիսյան, ԵՊԿ դոցենտ՝ Օլյա Նուրիջանյան



7

ՄԱՅԻՍԻ 7-Ը ԵՊԿ ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻ ՕՐ



ԵՊԿ ուսանողական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Նատալի Գալստյան

2

ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆԸ ՀՈՒՇԵՐՈՒՄ



Արմավիրի արվեստի պետական քոլեջի դասախոսները, բաց-դաս միջոցառման մասնակից ուսանողները

6

Մշակութային անցուղարչ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղում



ԵՊԿ պրոֆեսոր Սերգեյ Քեչեկի դասարանական համերգի մասնակիցներ

❖ Մայիսի 1-ին Գյուլմրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Քեչեկի դասարանական համերգը՝ նվիրված Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյակին: Ելույթ ունեցան Երևանի Պ. Ի. Զայնովսկու և Ա.Ա. Սպենդիարյանի անվան մասնագիտական երաժշտական դպրոցների աշակերտները և ԵՊԿ ուսանողները՝ Լիլիթ Մարտիրոսյանը, Թերեզա Մարկոսյանը, Ժամին Առուշանյանը, Դավիթ Յովհաննիսյանը, Օֆելյա Գրիգորյանը, Տանյա Հարությունյանը, Լուիզա Կոստանյանը, Մանե Դանիելյանը, ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի դասախոս Մարգարիտա Գրիգորյանը: Հնչեցին Լ. Վ. Բեթովենի, Կ. Դեբյուսիի, Ռ. Շոպենի, Ֆ. Շոպենի, Ռ. Շոտաուսի, Ֆ. Լիստի, Գ. Հովսեփյանի ստեղծագործություններից:

❖ Գյուլմրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում, մայիսի 8-ին տեղի ունեցավ «Աստղագարդ երկինքն իմ գլխավերևում» խորագրով համերգը, որը նվիրված էր Լ. Վ. Բեթովենի ծննդյան 250 ամյակին և ներառում էր կոմպոզիտորի վոկալ ստեղծագործությունները, այդ թվում՝ արիաներ միակ՝ «Ֆիդելիո» օպերայից: Համերգը կազմակերպել էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Օպերային ստուդիան, որի ղեկավարված ստանդարտական դեկավարն է համբավվոր երգչուհի, ՀՀ ժողովրդական

(տեսաբաններ), Ռուզաննա Թադևոսյանը, Դիանա Հովհաննիսյանը, Սեդա Մարյանը (ժողովրդական երգեցողություն, ժողովրդական գործիչ), Գրիգոր Խաչատրյանը (ջազ երգեցողություն), Շուշաննա Հովհաննիսյանը (երգչախմբային դիրիժորություն): Գիտաժողովը նշանակվել էր «Մասնագիտական մանկավարժություն»։ Երաժշտական կրթություն մասնագիտության ուսանողների առաջին բեմելով՝ Լիլիթ



ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի դասախոսներ, ուսանողներ, գիտաժողովի մասնակիցներ

Հարջոյան, Քրիստինա Տոնականյան, Անի Ավետիսյան: Ելույթ ունեցողների ղեկավարներն են Ռիտա Աղայանը, Նինա Հայրապետյանը, Աննա Կուզմինան, Նվարդ Եղոյանը, Կարապետ Եղոյանը, Լուսինե Հարությունյանը, Անահիտ Ղարիբյանը, Բելա Հովհաննիսյանը: Գիտաժողովի շրջանակներում հնչեցին ներբողներ մեծանուն հայորդիներին՝ Խ. Ավետիսյան - 95, Ա. Բաբաջանյան - 100, համագործակցության սկիզբ դրվեց նաև Գյուլմրիի Ք. Կարա-Մուրզայի անվ. պետական երաժշտական քոլեջի տեսական բաժնի հետ:

❖ Մայիսի 19-ին, ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի փոքր դահլիճում տեղի ունեցավ քանոնի երաժշտության համերգ, որին մասնակցեցին ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի և Գյուլմրիի Կարա-Մուրզայի անվ. պետական երաժշտական քոլեջի քանոնի դասարանի ուսանողները: Դասախոսներ Մարինե Ասատրյանի և Ալվարո Երեմյանի սաներ՝ Սեդա Մարյանը, Խորեն Հովհաննիսյանը, սանթուրահար Դիանա Գրիգորյանը, Բնարիկ Խաչատրյանը, Ամալյա Տիգրանյանը, նվագակցողներ Հասմիկ Զաքարյանն ու Անի Տոնյանը ունկնդրին ներկայացան Ն. Տիգրանյանի, Խ. Ավետիսյանի, Գ. Հախիմյանի, Օ. Հովհաննիսյանի և հայ



Լ. Վ. Բեթովենի ծննդյան 250-ամյակին նվիրված համերգի մասնակիցներ

արտիստ՝ Հասմիկ Պապյանը, տնօրենը՝ Հայկ Վարդանյանը: Երևանյան երկու ելույթներից հետո Օպերային ստուդիան ներկայացավ նաև գյուլմրեցի հանդիսատեսին՝ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի հետ միասին (դիրիժոր՝ Արմեն Կարճյան): Համերգն անցավ խոր հուզականության, գերմանական դասական երգային արվեստի անգուցական զգացողության մթնոլորտում, և թրափեց այն կարծրատիպը, թե Բեթովենի վոկալ երկերն ավելի ստորադասված են նվագարանային ժանրերից: Փայլուն ելույթներ ունեցան Գրիշա Մարտիրոսյանը, Վարդուհի Թորոյանը, Գևորգ Գինոսյանը, Նելլի Սաղաթեյանը, Մերի Մարտիրոսյանը, Արամ Սամիկոյանը, Լիլիթ Դավթյանը, Հովհաննես Կարապետյանը, Հայկ Վարդանյանը, Հասմիկ Պապյանը: Համերգը ձոնվեց ԵՊԿ 100-ամյա հոբելյանին:

❖ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղում, մայիսի 11-ին տեղի ունեցավ Ուսանողական գիտաստեղծագործական ընկերության գիտաժողովը՝ նվիրված Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հիմնադրման 100 ամյակին: Բուհի տեսական և կատարողական բաժնի ուսանողները հանդես եկան ոչ միայն բովանդակալից ելույթներով, այլ նաև առաջին անգամ ներկայացրեցին դասական ստեղծագործությունների փոխադրումներ՝ տարբեր գործիքների համար: Գործիքավորողներ և կատարողներն էին Հեղինե Սարգսյանը, Խորեն Հովհաննիսյանը, Ֆերդինանդ Մարյանը, Ստեփան Նազարյանը, Մերուժան Գևորգյանը, Շուշանիկ Զառաֆյանը, Սոֆյա Խաչատրյանը, Գևորգ Հակոբյանը, Արկադի Ասատրյանը: Զեկուցումներով հանդես եկան տարբեր մասնագիտության ուսանողներ՝ Հեղինե Սարգսյանը, Սոֆյա Խաչատրյանը, Թամարա Սարգսյանը, Էմմա Թորիկյանը,

Սիմֆոնիայի 2-րդ մասը, ««Շուշանիկ» սիմֆոնիկ պատկերը, ռոմանսներ, ինչպես նաև Տխուր վալսը՝ կոմպոզիտորի Մանկական ալբոմից՝ փոխադրված երգչախմբի համար (փոխադրումը Ռ.Շահապարոնյանի): Համերգին իրենց ստեղծագործություններով ներկայացան Է. Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների Հանրապետական 8-րդ մրցույթի դափնեկիրները: Ներածական խոսքով հանդես եկան երաժշտագետներ, ԵՊԿ դոցենտ Լիլիթ Եփրեմյանը և ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի տնօրեն Հասմիկ Հարությունյանը:

❖ Մայիսի 24-ին, ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղում հյուրընկալվել էր կոմպոզիտոր-դաշնակահար՝ Կարին Հելլման-Գևորգյանը: Նա ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիան և շուրջ 30 տարի ապրում և ստեղծագործում է Շվեդիայում: Անվանի արվեստագետի գործունեության և Շվեդիայում հայ երաժշտության հանրառնչակման կարևոր դրվագներին անդրադարձավ՝ դաշնակահարուհի Սուսաննա Ավետիսյանը: Հանդիպումը միտված էր կոմպոզիտորի, ինչպես նաև շվեդացի մի շարք հեղինակների ստեղծագործությունների ոճական և կատարողական առանձնահատկությունների բացահայտմանը՝ վարպետության դասի ձևաչափով: Հանդես եկան ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի դաշնակահար ուսանողները, կայացավ անչափ հետաքրքիր ստեղծագործական հանդիպում, որի ընթացքում ցուցադրվեցին նաև դրվագներ Կարին Հելլմանի նկարահանած ֆիլմից՝ նվիրված իր ուսուցչի՝ Եվալդ Միրզոյանի ծննդյան 100-ամյակին (հավելենք, որ Կարին Հելլման-Գևորգյանի հետ «ԵՊԿ հրատարակչության» ստեղծագործական առնչությունները շուրջ 25-տարի են): Դրվեց հայ-շվեդական յուրահատուկ համագործակցության սկիզբ նաև ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղում:



Կարին Հելլման-Գրիգորյան

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

❖ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի քանոնի դասարանի ուսանողներ՝ **Խորեն Հովհաննիսյանին, Սեդա Մարյանին** (դասախոս Մարինե Ասատրյան, նվագակցող Հասմիկ Զաքարյան) Բուլղարիայի Սոֆիա քաղաքում անցկացված «Սիա-սին XXI դարում» միջազգային մրցույթ-փառատոնում Մեծ մրցանակի, դաշնամուրային բաժնի ուսանող **Անի Գրիգորյանին** (դասախոս Լիանա Գրիգորյան) Իտալիայում կայացած դաշնակահարների միջազգային «FUTURE STARS» մրցույթ-փառատոնում առաջին մրցանակի արժանանալու առթիվ:

❖ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի առաջին կուրսի ուսանողներ՝ **Մարիամ Ղուկասյանին և Լիանա Գրիգորյանին** (դասախոս՝ Անի Ասատրյան) Լոնդոնում կայացած «LONDON FEST» 37-րդ Միջազգային մրցույթ-փառատոնում 1-ին մրցանակ ստանալու առթիվ:

❖ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի ուսանող՝ **Միքայել Պետրոսյանին** (դասախոս Արշակ Պետրոսյան, նվագակցող՝ Մարգարիտա Գրիգորյան) Ռուսաստանի Զվենիգորդ քաղաքում անցկացված երաժիշտ-ստեղծագործողների առաջին միջազգային մրցույթում առաջին մրցանակի արժանանալու առթիվ և՛ որպես կատարող և՛ որպես կոմպոզիցիայի հեղինակ:

Խմբագրական
քաղված է՝ ԵՊԿ Գյուլմրիի մասնաճյուղի
ֆեյսբուքյան էջից



ԵՊԿ ԳՄ ռեկտոր Հասմիկ Հարությունյան, Եվալդ Միրզոյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համերգի մասնակիցներ և հյուրեր

Հայոց Ցեղասպանության 106-րդ տարելիցին նվիրված միգրացիոն

Ապրիլի 30-ին Արմավիրի արվեստի պետական թուղթի դերասանական արվեստ բաժնի դասախոս Վիկտորյա Վարդանյանի նախաձեռնությամբ բեմադրվեց յուրօրինակ ներկայացում: Միջոցառումը նվիրված էր Հայոց Ցեղասպանության 106-րդ տարելիցին:

Թուղթի դերասանական արվեստ և այլ բաժինների ուսանողներն իրենց հուզառատ և տպավորիչ ներկայացման միջոցով կարողացան համդիսատեսին փոխանցել ցեղասպանված և օտար ափերում ապաստան գտած հայ ազգի հույզերն ու զգացմունքները: Միջոցառման նյութը Մեծ եղեռնի ահասարսուռ օրերի ականատես երկու նշանավոր հայերի՝ Կոմիտասի և Սողոմոն Թեհլերյանի տարաբախտ ճակատագրերի ողբերգական պահերի արտացոլումն էր արվեստի լեզվով՝ հետաքրքիր բեմադրությամբ, հուզառատ գործիքային կատարումներով ու երգերով: Միջոցառման անչափ հուզեց ներկաներին: Դասախոս-կազմակերպիչ Վիկտորյա Վարդանյանի խոսքով. «Ամեն ինչ սկսվեց այն ժամանակ, երբ ես ցանկացա բեմադրել մեկ ամբողջական պիես, որտեղ պետք է հանդես գային Արմավիրի արվեստի պետական թուղթի դերասանական բաժնի ուսանողները»:

Քանի որ բաժինը նորաստեղծ է և ուսանողների քանակը՝ քիչ, ես որոշեցի ինքս հավաքագրել և ստեղծել հատվածներից բաղկացած ներկայացում, որում անդրադարձ է կատարվում անցած 106 տարիների՝ պատմության մեջ հիշարժան և մնայուն դրվագներին: Միջոցառումը՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին, ուներ ուսուցողական բնույթ. որ էլ երեք թույլ չտանք մեծ բարբարոսություն մեր ազգի նկատմամբ և դա կարող ենք անել այն դեպքում, երբ մենք մի բռնացք դառնանք, թե ու թիկունք լինենք միմյանց: Եվ միայն այդ ժամանակ կարող ենք ասել «Մենք կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»»:

Միջոցառման ավարտին ելույթով հանդես եկավ թուղթի տնօրինությունը՝ շնորհակալություն հայտնելով տպավորիչ ելույթների համար:




Խմբագրական

Արմավիրի արվեստի պետական թուղթի պարային բաժնի ուսանողները, դասախոս Գոհար Բարեղանյան



Յուրա Դուկասյան (Սողոմոն Թեհլերյանի դերում), Ռուբինա Կնյազյան (դատավորի դերում)



Սոմա Դավթյան (Սողոմոն Թեհլերյանի մոր դերում)



Յուլիանա Վարդանյան (Կոմիտասի դերում), Նելլի Հայրապետյան (դաշնակահարն էր, ով ներկայացման մեջ հանդիսանում էր Կոմիտասի մուսան, երևակայությունը)



Վիկտորյա Վարդանյանը թուղթի դերասանական արվեստ բաժնի 1-ին կուրսի ուսանողների հետ



Միջոցառման մասնակից ուսանողները



Միջոցառման մասնակից ուսանողները թուղթի տարբեր բաժիններից Ամունքում է ԱՄՊԲ-ի դերասանական արվեստ բաժնի դասախոս Վիկտորյա Վարդանյանը

«Լուսանում է ամեն խավար...» հորեյանական երեկոն՝ հարգանքի տուրք Խաչատուր Ավետիսյանի ծննդյան 95-ամյակին

Կոմպոզիտոր, քանոնահար Խաչատուր Ավետիսյանի 95-ամյակի առթիվ մայիսի 23-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում անցկացվեց «Լուսանում է ամեն խավար...» խորհրդանշական երեկոն: Նախագծի զեղարվեստական ղեկավարը Միքայել Ավետիսյանն էր, միջոցառումը կազմակերպել էր Հայաստանի պետական ֆիլիարմոնիան: Երեկոյին ելույթ ունեցան Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբը (զեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր արտիստ պրոֆեսոր Նորայր Դավթյան), «Նաբեկացի» նվագախումբը (զեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ՝ Արտեմ Խաչատուր), ԵՊԿ օպերային ստուդիայի երգչախումբը (խմբավար՝ Գայանե Սահակյան), Հայաստանի պարի պետական անսամբլը (գլխավոր բալետմայստեր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ասատուր Կարապետյան), Հայաստանի պարար-

վեստի «Բարեկամություն» պետական անսամբլը (զեղարվեստական ղեկավար՝ ՀՀ ժողովրդական արտիստ՝ Նորայր Մեհրաբյան): Որպես մենակատարներ հանդես եկան՝ Լուսինե Ազարյանը, Գուրգեն Բավեյանը, Նունե Բաղդասարյանը, Վարդան Բաղդասարյանը, Արսեն Գրիգորյանը (Ասո), Մավր Սկրտչյանը, Եվա Եգանյանը: Համերգի ընթացքում հնչեցին Խաչատուր Ավետիսյանի ստեղծագործությունները: Երեկոն յուրատեսակ հարգանքի տուրք էր մեծանուն կոմպոզիտորի հիշատակին: Կոմպոզիտորի որդին՝ դիրիժոր Միքայել Ավետիսյանն առանձնահատուկ ընդգծում է՝ Խաչատուր Ավե-

տիսյանը հսկայական ժառանգություն է թողել, նրա գործերը մինչ այժմ կատարվում են և ժողովուրդը սիրում է նրա ստեղծագործությունները: Ամերիկացի լուսինե Ավետիսյանն ընդգծում է՝ ուրախ է և զգացված, որ Հայաստանում կազմակերպվեց այս երեկոն: Համերգն անցավ լեփ-լեցուն դաիլիճում՝ հանդիսատեսի ջերմ արձագանքների ներքո:

Խմբագրական

<https://www.aravot.am/2021/05/24/1193034/>



Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբ, զեղարվեստական ղեկավար և դիրիժոր Նորայր Դավթյան



Հայաստանի պարի պետական անսամբլ, գլխավոր բալետմայստեր Ասատուր Կարապետյան

Խոսում է Սպենդիարյանը

«Հետադարձ հայացք գցելով այն ամենի վրա, ինչ ես գրել եմ մինչև օրս, կարելի է եզրակացնել, որ իմ ստեղծագործություններից առավել անհատական են արևելյան ոճի ստեղծագործությունները»
Ա. Սպենդիարյան

1811 թ., երբ ծնվեց Ա. Սպենդիարյանը, ոչ ոքի մտքով չէր էլ անցնում, որ նա պարզապես հասարակ մանուկ չէր, ինչպես բոլորը մանուկները։ Նրա հասակակիցները տարված էին մանկական խաղերով և այլ չարածճի զբաղմունքներով, ինչը պարզապես զվարճացնում էր նրանց։ Ապրում էին անհոգ և վայելում իրենց մանկությունը։ Մինչդեռ փոքրիկ Ալեքսանդրն արդեն կապվել էր երաժշտության հետ և հենց դա էր նրա հանգստության և երազանքին տանող ճանապարհը։ Նա ծնվեց ի վերուստ ստացած շնորհով, որը պետք է նրան բերեր փառք, ճանաչում և այնքան շատ սեր, որ մինչև այսօր մեր մեր հիշողության մեջ։ Այս տարի լրացավ հայ մեծանուն կոմպոզիտոր, դիրիժոր և խմբավար Ալեքսանդր

Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակը, որին էլ նվիրված էր Արմավիրի արվեստի պետական քոլեջում, մայիսի 7-ին, ուսանողների մասնակցությամբ՝ «Խոսում է Սպենդիարյանը» խորագրով տեղի ունեցած միջոցառումը։ Այն հիանալի կազմակերպել էին քոլեջի երաժշտության տեսության բաժնի դասախոսներ՝ Հերմինե Հարությունյանը և Արաքսյա Աղաջանյանը։ Միջոցառմանը ներկայացվեցին կոմպոզիտորի կյանքը և ստեղծագործությունները։ Կատարումներով հանդես եկան՝ Տատյանա Հմայակյանը (կատ. «Արևելյան օրորոցային»-ը, դաս. Հ. Հովհաննիսյան), Օմիկ Միրզոյանը (կատ. «Այ վարդ»-ը, դաս. Հ. Հովհաննիսյան) և Գրետա Վարդանյանը (քանոն, կատ. «Պարսկական քայլերգը», դաս. Աննա Ալավերդյան)։

Թատերականացված փոքրիկ ներկայացմամբ հանդես եկան քոլեջի ուսանողներ՝ Հովսեփ Վարդանյանը (Հովհաննես Թումանյանի դերում) և Արամայիս Սահակյան (Ալեքսանդր Սպենդիարյանի դերում), որոնք ցուցադրեցին Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ծնունդի հետ կապ-

ված՝ Հ. Թումանյանի դստեր՝ Նվարդ Թումանյանի հուշագրություններից մի հատված։ Թումանյանը և Սպենդիարյանը Լոռիում հանդիպելիս մտածում էին սյուժեի մասին։ Թումանյանն սկսում է կարդալ «Փարվանա»-ն։ Սակայն այն Սպենդիարյանն այնքան էլ հարմար չի գտնում՝ պատճառաբանելով իբրև սյուժեն շատ քիչ է, խնդրում է մեկ այլ մոր բան կարդալ իր համար։ Երբ Թումանյանն սկսում է կարդալ «Թմկաբերդի առումը», կոմպոզիտորը հիացմունքով սկսում է լսել և իր մտքում արդեն ստեղծում ու հնչեցնում է մեղեդին, և զոհ ժպիտով ասում. «Ահա, այ սա էի փնտրում և գտա, ինձ ոչինչ այլևս հարկավոր չէ»։

Միջոցառման ավարտին հիացմունքի և զովեստի խոսքեր հնչեցին քոլեջի տնօրինության և դասախոսների կողմից։

ԼԻՂԱ ՄԿՐՏՅԱՆ

Արմավիր արվեստի պետական քոլեջի երաժշտության տեսության բաժնի ուսանող



Արամայիս Սահակյան (Ա. Սպենդիարյանի դերում) և Հովսեփ Վարդանյան (Հ. Թումանյանի դերում)



Միջոցառման մասնակից ուսանողներ



ԱԱՊԲ երաժշտության տեսության բաժնի վարիչ Լիանա Եղիազարյան, միջոցառման կազմակերպիչ դասախոսներ՝ Հերմինե Հարությունյան և Արաքսյա Աղաջանյան, միջոցառման մասնակից ուսանողներ

Առնո Բաբաջանյանը հուշերում

«Ես ազատ ժամեր չունեմ և չեմ էլ ունեցել։ Ամբողջ կյանքում նման եմ եղել պաշարված ամրոցի։ Այո՛, ես պաշարված եմ հնչյուններով։ Մի զարմացք, եթե ասեն, որ իմ տեսած երազներն էլ հնչյունների հետ են կապված։ Այդ հնչյուններից ես ընտրում եմ սրտահաճները և երգեր հորինում։ Ինձ համար ազատ ժամ ունենալ, նշանակում է կտրվել հնչյուններից, որ մույճն է, թե հրաժեշտ տալ կյանքին», - ասել է մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը։

Այո՛, ինչ խոսք, մեծ է նրա դերը մեր կյանքում, հայկական երաժշտարվեստում։ Նա իր տաղանդի, հոգուն դիպչող գեղեցիկ երգերի, անխոս և միաժամանակ այնքան խոսուն ու անմահ երաժշտության շնորհիվ մնացել է իր ժամանակակիցների սրտերում, և սերնդեսերունդ քնքրորեն փայփայելով դրանք հասել են մեզ։

Այս տարի լրացավ Ա. Բաբաջանյանի ծննդյան 100-ամյակը և գրեթե բոլոր երաժշտական դպրոցներում, քոլեջներում միջոցառման և բաց դասի տեսքով նշում են այն։ Այդպիսի բաց դաս-միջոցառում տեղի ունեցավ նաև Արմավիրի

արվեստի պետական քոլեջում, մայիսի 14-ին։ «Առնո Բաբաջանյանը հուշերում» խորագրով միջոցառման կազմակերպիչներ, երաժշտության տեսության բաժնի դասախոսներ՝ Արմինե Աթոյանի և Հասմիկ Ասլանյանի ջանքերով ամեն ինչ հիասքանչ էր ներկայացված։ Նրանք մասնակից ուսանողների հետ ստեղծել էին մի մթնոլորտ, ուր ամեն ինչն էր հիշեցնում աշխույժ, կատակասեր, դրա հետ մեկտեղ մեծ հայրենապաշտ, նվիրյալ ու ազնիվ անձնավորության՝ Առնո Բաբաջանյանի վեհ կերպարը։ Միջոցառման ընթացքում հնչեցին կոմպոզիտորի «Վեց պատկեր» դաշնամուրային շարքից «Խորալ»-ը (կատարեց՝ Հարություն Եղիազարյանը, դասախոս՝ Ելենա Վարդազարյան), «Твои следы» (խոսք եվգենի Եվտուշենկոյի, կատարեցին՝ Ալիկ Վարդանյանը, Աշոտ Դավթյանը, Հարություն Եղիազարյանը, Արուսիկ Պետրոսյանը և Դոնարա Անտոնյանը, դասախոս՝ Արմեն Ավետիսյան) և «Սիրո երգ» (խոսք՝ Վլադիմիր Հարությունյանի, կատ.՝ Ալիկ Վարդանյանը, Աշոտ Դավթյանը, Հարություն Եղիազարյանը և Կահան Կիրակոսյանը (դասախոս՝ Արմեն Ավետիսյան) երգերը։ Նոր շնչով մատուցվեց «Էլեգիա»-ն՝

փոխադրած 2 քանոնի, դուդուկի և դիլի համար, (կատարեցին Լիդա Մկրտչյանը, Մարինե Եղիշյանը, Նորայր Հովհաննիսյանը և Արտյոմ Խաչատրյանը, դասախոսներ՝ Մարինե Ասատրյան, Հովհաննես Մարտիրոսյան, Աղվան Գրիգորյան)։ Հնչեցին «Մեղեդի»-ն դաշնամուրի համար, (կատ. Վալենտինա Հունանյանը, դասախոս՝ Ելմիրա Բաբաջանյան) և «Տղերքը, որոնք չկան» խմբերգ երգչախմբի կատարմամբ, խմբավար՝ Հասմիկ Ասլանյան, կոնցերտմայստեր՝ Սոնա Ղամբարյան։

Միջոցառման ժամանակ մեծ էկրանով ցուցադրվեցին Ա. Բաբաջանյանի և նրա մտերիմների ու ընկերների լուսանկարներից։ Լսարանում մի փոքրիկ անկյուն հատկացվել էր նաև կոմպոզիտորի ծաղրանկարներին՝ արված հայտնի նկարիչների կողմից, ինչպես նաև Բաբաջանյանի նկարած նկարներին։ Միջոցառման կազմակերպիչ դասախոսները համագործակցել էին նաև քոլեջի գեղարվեստի բաժնի հետ, վարիչ՝ Լուսինե Վարդանյան, ում շնորհիվ հատուկ այս միջոցառման ժամանակ ներկայացվեց գեղարվեստի բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլյա Գալստյանի ստեղծած Առնո Բաբաջանյանի գծանկարը։ Բաց դասի վերջում ներկաներին ցուցադրվեց Առնո Բաբաջանյանի վերջին հարցազրույցը՝ կատարված Դիլիջանում, 1983 թ.։ Միջոցառման ավարտին իրենց շնորհակալական և հիացմունքի խոսքերը կազմակերպիչներին հղեցին քոլեջի տնօրինությունը և դասախոսները։

Եզրափակելով, նշենք երաժշտագետ ժաննա Զուրաբյանի խոսքերն՝ Ա. Բաբաջանյանի երգերի մասին. «Երգը Բաբաջանյանի համար մի յուրահատուկ շնչառություն էր, ստեղծագործական լիքների թեթևացման օդակ, որ հաճախ մի նշանակալից գործի ստեղծումը կապում էր հաջորդ մտահղացման հետ։ Բաբաջանյանը երգի վարպետ էր՝ օժտված մեղեդի ստեղծելու աստվածատուր շնորհով։ Նրա երգերը բուռն երիտասարդությունն է, որն այսօր էլ հնչեղ արձագանքում է մեր սերնդի սրտերում»։

ԼԻՂԱ ՄԿՐՏՅԱՆ

Արմավիր արվեստի պետական քոլեջի երաժշտության տեսության բաժնի ուսանող



Արմենուհի Ներսիսյան, Լիդա Մկրտչյան, Արմինե Աթոյան, Հասմիկ Ասլանյան



Հարություն Եղիազարյան



Վալենտինա Հունանյան



Քոլեջի երգչախումբը, խմբավար Հասմիկ Ասլանյան



Միջոցառման մասնակից ուսանողները


Վոնո Բաբազանյանի եվ Էդվարդ Միրզոյանի ծննդյան 100-ամյակներին նվիրված գիտաժողով կոնսերվատորիայում

Մայիսի 17-18-ը, Երևանի պետական կոնսերվատորիայի Ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ Ուսանողական գիտական ստեղծագործական ընկերության գիտաժողովը՝ նվիրված Առնո Բաբաջանյանի և Էդվարդ Միրզոյանի ծննդյան 100-ամյա հոբելյաններին: Մասնակցում էին Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների ուսանողները, որոնց թվում էին՝ Երևանի պետական կոնսերվատորիայի, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի, Առնո Բաբաջանյանի անվ. պետական երաժշտամանկավարժական քոլեջի, Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական, Կապանի արվեստի պետական և Արմավիրի արվեստի պետական քոլեջների ուսանողները: Ողջույնի խոսքով հանդես եկավ և գիտաժողովն անցկացրեց՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտության գծով պրոֆեսոր՝ Շուկինար Մովսիսյանը: Բազմազան, հետաքրքիր և բովանդակալից զեկույցներով հանդես եկան երաժշտագիտության, երաժշտության տեսության, խմբավարության և երգեցողության բաժինների սովորողները՝ անդրադառնալով երաժշտության տեսությանն ու պատմությանը, հայկական ֆոլկլորին առնչվող ամենատարբեր թեմաներին: Ելույթներն ուղեկցվում էին բուռն և հետաքրքիր քննարկումներով, դիտողություններով ու առաջարկություններով: Կրթական որոշ հաստատությունների ուսանողները գիտաժողովին մասնակցեցին առցանց: Յուրաքանչյուր ելույթից հետո մասնակիցներին տրվեցին շնորհակալագրեր: Ուսանողական ամենամյա այս գիտաժողովների դերը անչափ կարևոր է մեր ուսումնական պրոցեսում, քանի որ ուսանողները ձեռք են բերում ամբիոնից գրագետ խոսելու, իրենց վերլուծական միտքն արտահայտելու փորձ, երաժշտագիտական աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ:





ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ



Գիտաժողովի մասնակիցներ և հյուրեր



Կապանի արվեստի պետական քոլեջի ուսանող՝ Հերմինե Իշխանյանի առցանց ելույթը



Երաժշտությունը կաթիլ առ կաթիլ թակեց դուռս...

Բելա Տիգրանի Հովհաննիսյան - կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս, միջազգային մրցույթ-փառատոնի Մեծ մրցանակակիր, «Ռիթմ-թելարություններ» ուսումնամեթոդական ձեռնարկի հեղինակ: Ստեղծագործությունները կատարվել են Ավստրիայում, Ռուսաստանում, ինչպես նաև՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի, Գյումրու պետական կամերային նվագախմբի կողմից: Պարգևատրվել է Գյումրու քաղաքապետի շնորհակալագրով և պատվոգրով: ՀՀ կոմպոզիտորների միության անդամ է:

- Փորձեք ներկայացնել ինքներդ Ձեզ՝ որպես կոմպոզիտորի:

- Անկեղծ, պահանջկոտ, նրբանկատ, իրատես, երազկոտ, աշխարհի և մարդկության մի խենթ սիրահար:

- Ինչպե՞ս է բացահայտվել Ձեր շնորհը: Ե՞րբ հասկացաք, որ ստեղծագործելը Ձեր կոչումն է: Միզուցե ինչ-որ բան, կամ ինչ-որ մեկն ազդե՞լ է երաժշտությամբ զբաղվելու Ձեր որոշման վրա:

- Երաժշտությունը կաթիլ առ կաթիլ թակեց դուռս, մտավ ներս և դարձավ ճակատագիր (ժպտում է):

- Ի՞նչն է տվորաբար Ձեզ համար դառնում ոգեշնչման աղբյուր:

- «Ինչ»-ը չի կարող ինձ համար ոգեշնչման աղբյուր լինել: Դա անտեսանելի մի գերբնական ուժ է, մեր զգացումների, ապրումների հետևանք:

- Ինչպես կնկարագրեիք Ձեր ստեղծագործական գործընթացը, ինչպե՞ս եք գրում երաժշտություն. այն ծնվում է գլխում՝ պայմանավորված որոշակի տրամադրությամբ, թե՞ մատների տակ՝ մտածում եք կոմպոզիցիա և տեխնիկապես հարստացնում այն:

- Այն ամեն անգամ տարբեր դրսևորումներ ունի: Նույնն է, թե ինչպես է ծաղկում բնությունը, որտեղ է լույսը, կամ ինչպես են ծնվում մարդկային բոլոր դրսևորումներն՝ ընկերությունը, սերը... Դա անբացատրելի է, աստվածային, բայց այլ հարց է, թե ինչպե՞ս են այդ ծնունդն ապրեցնում, մեծացնում և դարձնում մի ամբողջություն՝ կերտվածք: Այստեղ արդեն օգնության է գալիս այն միջավայրը և գիտելիքները, որտեղ ապրում և կրթվում եմք:

- Ունե՞ք արդյոք նախընտրելի երաժշտական գործիք, որի համար գերադասում եք երաժշտություն գրել և ինչո՞ւ եք առանձնացնում հենց այն:

- Ամեն մի երաժշտական գործիք մեր երաժշտական կյանքում իր ասելիքն ունի: Այն մարդկային հոգեվիճակների վերարտադրման տեմբրային, գունային գամմա է: Եթե զմամ տարիներ հետ, գուցե առանձնացնեմ երկուսը, բայց անցնելիք տարիները խոսում են, որ եթե մտածումներիս մեջ չլինեք գեթ մեկը, ապա չէի ստեղծի Սիմֆոնիան: Ցանկացած երաժշտական գործիք մարդու ապրելիք կյանքում իր աննկատ ներկայությունն ունի:

- Հավանաբար, Ձեր ստեղծագործությունների պահոցում ունեք առավել հոգեհարազատ ստեղծագործություն, որն առանձնահատուկ նշանակություն ունի Ձեր համար և բացառիկ տեղ է գրավում Ձեր սրտում: Ո՞ր ստեղծագործությունը կառանձնացնեիք որպես այդպիսին և ինչո՞ւ:

- Մտովի ինձ տեղափոխեցիք մանկություն: Երբ մորս հարց-

նում էին, թե երեխաներից ու՞ն ես առավել սիրում, պատասխանում էր. «Նրանք իմ աչքերն են»: Գուցե ուրիշ կլինեք պատասխանը, եթե մայրս երկու սիրտ ունենար: Տարիներ են անցել, բայց մորս շուրթերից դեռ նույն պատասխանն է հնչում:

- Որո՞նք են Ձեր ստեղծագործություններին բնորոշ առանձնահատուկ, ինքնատիպ գծերը: Ինչո՞վ է Բելա Հովհաննիսյանի ձեռագիրը տարրորշվում այլ կոմպոզիտորների ստեղծագործական ձեռագրերից:

- Կոմպոզիտորական արվեստում ունենալ ինքնատիպ ձեռագիր, արդեն խոսում ենք երկար ճանապարհ անցած արվեստագետի մասին: Մեր կոմպոզիտորական արվեստում քչերն ունեն իրենց՝ Ձեր նշած տարրորշվող ձեռագիրը, և ոչ բոլորինն է, որ ժամանակի անիվը մոռացության չի տալիս: Իսկ Բելա Հովհաննիսյանի ձեռագրի մասին խոսելը վաղ է, անելիքները շատ են:

- Կ՞ա արդյոք այնպիսի կոմպոզիտոր, ում ստեղծագործության հանդեպ անթաքույց սեր եք տածում, խոհակից եք նրա ստեղծագործական մտախղացումներին: Ի՞նչն է հոգեհարազատ, հետաքրքիր նրա ստեղծագործություններում:

- Երաժշտության մեջ սերս անթաքույց է: Չեմ առանձնացնի որևէ մեկին: Նրանցից յուրաքանչյուրը երաժշտական աշխարհի հավերժի մի ծաղիկ է՝ իր բույրով: Երբ ունկնդրում ենք ստեղծագործությունը, արդեն իսկ մենք մեր մտքում խոսում ենք: Նույնիսկ, «խոսում»-ը տարածության մեջ վերափոխվում է ապրումակցման: Եվ ժամանակն է, որ այն հանդարտում է:

- Կարո՞ղ եք նշել կոմպոզիտորների անուններ, ովքեր երբևէ ազդել են Ձեր ստեղծագործական մտափորձի ձևավորման և զարգացման վրա:

- Սկզբնական ստեղծագործական մտափորձիս կրթման, ձևավորման մեջ մեծ դեր է խաղացել դասախոսս, ինչի համար շնորհակալ եմ: Հետագան մենք ինքներս ենք կառուցում: Ինքնակրթվում, կատարելագործվում, խառնվում ստեղծագործական կյանքի փոթորիկի մեջ, վերագտնում մեզ, հետո դառնում այն, ինչ ի վերուստ տրված ենք լինելու:

- Ձե՞ք վախենում լինել անկեղծ երաժշտության մեջ, քանզի անկեղծությունը բացահայտում է կոմպոզիտոր-մարդու ներքնաշխարհը: Որքանո՞վ է Ձեր երաժշտությունը բացահայտում Ձեզ:

- Ոչ, վախենա՞լ, միանշանակ ոչ: Երբ անկեղծ չես արվեստում, կյանքում, դառնում ես շիճու և չես կարող իրական արժեք ստեղծել: Երաժշտությունը մեր կյանքի դրսևորումն է: Եթե ստեղծագործողն անկեղծ չէ իր իսկ ստեղծագործությունների մեջ, նա անկեղծ չէ նաև միջավայրում, ընտանիքում, նույնիսկ՝ իր սեփական ես-ի հետ: Չմոռանա՞ք՝ երաժշտությունը հոգեվիճակ է, մարդկային ծնունդ: Եթե չկա անկեղծություն, չկա իրական արժեք: Մենք վերագտնում ենք մեզ մեր կերտած ստեղծագործությունների միջոցով, բայց ընկալումը, բացահայտումը՝ թողնում լսարանին:

- Այս պահին ունե՞ք կոնկրետ ստեղծագործություն, որի շրջանակներում աշխատանքներ եք կատարում, եթե այո, ապա ստեղծագործական ո՞ր ժանրում է ընդգրկված այն և ստեղծագործելու ո՞ր փուլում է գտնվում:

- Հիմա մտածումների ժամանակահատված է, դրանց մասին կլռեմ, չեմ բարձրաձայնի: Թողնեք ժամանակին:

- 2020 թ. պատերազմը մի նոր ու ծանր փորձություն էր մեր ժողովրդի համար, որն, անշուշտ, անդրադարձավ նաև յուրա-

քանյուրիս ներաշխարհի վրա:

- Պատերազմական օրերին ես գրեցի «Արցախին» ստեղծագործությունը՝ որպես ապրումներիս ու տրամադրություններիս հանգրվան:

- Ինչպիսի՞ արձագանք ունեցան այդ իրադարձությունները Ձեր ստեղծագործական կյանքում և ի՞նչ արտահայտչական դրսևորում գտան դրանք:

- Այս հարցը ծանրագույն հարցերից է, որը չի հասել իր հ ա ն գ ու ճ ա լ ու ծ մ ա ն ը , որովհետև չես կարող լռել, խոսել, պարզապես չես կարող...:

Այո, այդ ժամանակահատվածում գրվեցին և հիմա էլ գրվում են շատ ստեղծագործություններ: Ինձ մոտ ինքնաարտահայտումը այլ էր: Գրվեց «Սթեն և երաժշտություն» գիտական հոդվածը, որը տպագրվեց կոնսերվատորիայի պաշտոնական մամուլում՝ «Երաժշտական Հայաստան» միջազգային ամսագրում: Այն մտովի կամուրջ ստեղծեց հետերկրաշարժյան տարիների և մեր օրերի միջև:

- Ի՞նչ եք կարծում, կոմպոզիտորի համար ստեղծագործական նպատակ պետք է լինի սեփական հույզերի, զգացումների արտահայտումը, թե՞ իր ստեղծագործության միջոցով հարազատ ժողովրդին հույս, հավատ, լավատեսություն ոգեշնչելը:

- Ցավով պետք է նշեմ. կյանքում ամենավտանգավորը սուտն է, կեղծիքը, խաբեությունը: Եթե դու ինքդ ստում ես քո սեփական հույզերի, զգացումների մեջ, ինչպես պետք է հույս, հավատ ներշնչես հարազատ ժողովրդիդ:

- Կ՞ա մի հարց, որին կցանկանայիք անդրադառնալ, սակայն այն չինչեք հարցազրույցում:

- Ձեր տված հարցերն այնքան նրբին էին այս ձևաչափում, որ դժվար թե ավելացնեմ: Այլ կմաղթեմ, որ աշխարհս խաղաղ լինի, մարդկանց հոգիներում գերիշխի բարությունը, սերը, հոգածությունը դիմացինի հանդեպ, գուցե այդպես հե՞շտ լինի ապրել: Կարողացեք հարգել ինքներդ ձեզ, զնահատել դիմացինին և հասկանալ, որ այս կյանքում մնալունը հոգևոր արժեքներն են:

- Ամփոփե՞ք մեր հարցազրույցը:

- Շնորհակալ եմ մտերմիկ զրույցի համար: Այն առանձնազավ իր տեսակի մեջ, քանի որ, զրուցակիցս ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի մեր սիրելի ուսանող էմիլ Դարբինյանն է: Ընորհակալ եմ:

Հարցազրույցը վարեց՝ ԵՊԿԳՄ «Երաժշտական արվեստ» բաժնի 4-րդ կուրսի ուսանող՝ ԵՄԻԼ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ, «Հեռուստատեսության և ռադիոյի երաժշտության լրատվության հիմունքներ» առարկայի շրջանակներում, դասախոս՝ Անահիտ Դարբինյանի <http://hayreniq.am/am-n-382.html?fbclid=IwAR0wRoCM6p6WGiHpa>

Լյուդվիգ վան Բեթհովենի եւ Էռնստ Քրիստոֆ Դրեսսլերի ստեղծագործական կապը. Լորահայր Լյուդվիգ վան Բեթհովենի մասին

Հայտնի իրողությունն է, որ Լյուդվիգ վան Բեթհովենի ստեղծագործությունները շատ են ուսումնասիրված թե՛ պատմականորեն, թե՛ տեսականորեն: Սակայն առաջ են գալիս նոր հարցեր ու մտքեր, որոնք դրդում են այլ տեսանկյունից դիտարկել «հայտնի» թվացող թեմաները:

Բազմիցս նշվել է, որ Բեթհովենի ստեղծագործական ոճում կարևորվում է թեմատիկ նյութ կառուցելու մեթոդային վարպետությունը: Կարելի է ասել, որ Բեթհովենի յուրօրինակ մտածողության և ստեղծագործության մեջ ձևն ու բովանդակությունը հասել էին կատարյալ միասնության:

Բեթհովենի ժառանգության մեջ, իր սինֆոնիաների և սոնատների համեմատությամբ, առավել քիչ են ուսումնասիրված վաղ շրջանում գրված վարիացիաները:

Վարիացիայի ժանրում Մեծ գերմանացի մշակունք էր ինչպես սեփական թեմաները, այնպես էլ ոչ հայտնի կոմպոզիտորների թեմաներ: Այս համատեքստում, մեզ հետաքրքրել է թե. «Ովքե՞ր են եղել այն կոմպոզիտորները, որոնց անդրադարձել է Բեթհովենը վարիացիոն ժանրում և ինչ սկզբունքներով է առաջնորդվել թեմայի ընտրության հարցում»:

Բեթհովենին են պատկանում 46 դաշնամուրային վարիացիոն շարք, որոնցից 20-ը գրված են մենակատար դաշնամուրի համար: Դրանց մեծ մասն ստեղծվել են 1783–1802 թվականներին՝ նրա կատարողական գործունեության առավել ակտիվ շրջանում:

Այլ կոմպոզիտորների թեմաներով Բեթհովենը գրել է 16 վարիացիոն շարք:

Դրանցից 14-ը գրված են օպերաներից և վոկալ այլ ժանրերից վերցված թեմաներով: Վարիացիաներից երեքը ստեղծվել են ժամանակակիցների գործիքային ստեղծագործությունների հիման վրա (**Максимов Евгений Иванович., История фортепианных вариаций классико–романтической эпохи, стр. 122**):

Բեթհովենի դաշնամուրային վարիացիոն ժանրի առաջին ստեղծագործությունն «Ինը վարիացիան» է՝ գրված Դրեսսլերի քայլերի հիման վրա:

Պետք է նշենք, որ Էռնստ Քրիստոֆ Դրեսսլերի անունը պատմության մեջ մտավ Բեթհովենի այս վարիացիայով: Եվ մեզ հետաքրքրել է. «Ի՞նչ կապ ունեին Բեթհովենը և Դրեսսլերը և ինչպե՞ս դարձավ Դրեսսլերի քայլերը Բեթհովենի վարիացիաների հիմք»:

«Ինը վարիացիան» Բեթհովենի 1-ին տպագիր ստեղծագործությունն է և շատերը հաճախ մեկնաբանում են որպես նրա առաջին կոմպոզիտորական գործ:

Լ. վ. Բեթհովենն այս ստեղծագործությունը գրել է 11 տարեկանում, երբ սովորում էր Քրիստիան Գոտլոբ Նեֆեի մոտ (**Давыдов И. А., Людвиг ван Бетховен. Его жизнь и музыкальная деятельность, глава I**):

Նեֆեն դարձավ առաջին ուսուցիչը, ով սիստեմավորեց և արդյունավետ դարձրեց պատանի երաժշտի պարապմունքները: Նեֆեի մոտ Բեթհովենը կազմավորվեց որպես դաշնակահար, որից հետո սկսեց զբաղվել կոմպոզիցիայով: «Ինը վարիացիան» Դրեսսլերի քայլերի թեմայով՝ գրված է եղել ուսումնառության ընթացքում: Նեֆեն այն համարելով ամբողջական և ավարտուն, ձեռնամուխ է լինում պատանի Բեթհովենի այս ստեղծագործության տպագրությանը Մանհայմում՝ Գյոց (**Goetz**) հրատարակչությունում որպես նվիրում Ֆելիս ֆոն Վոլֆ - Մետտերնիխին՝ դուքս Իգնաց ֆոն Մետտերնիխի այրույն:

«Ինը վարիացիայում» երաժշտագետ Ե. Ի. Մաքսիմովը նկատել է Կառլ Ֆիլիպ Էմանուել Բախի և Կ. Գ. Նեֆեի ոճական ազդեցությունը:

Իսկ Կուրտ ֆոն Ֆիշերը ցույց է տվել ընդհարություններ Բեթհովենի 5-րդ վարիացիայի և Նեֆեի հայտնի A-dur Արիոզոյի 1-ին վարիացիայի միջև (**Максимов Евгений Иванович., История фортепианных вариаций классико–романтической эпохи, стр. 127**):

Քանի որ Բեթհովենը փոքր էր և ուսումնական պրոցեսի ընթացքում՝ հավանականությունը, որ Բեթհովենն անձամբ հանդիպել է՝ Դրեսսլերին շատ քիչ է: Եվ Բեթհովենին և՛ Դրեսսլերին կապող միակ օղակը մնում է Նեֆեն: Թե ինչպես է Դրեսսլերի քայլերը հայտնվել Նեֆեի մոտ, կամ արդյո՞ք Նեֆեն անձնապես ծանոթ է եղել Դրեսսլերի հետ, չենք կարող իմանալ: Հայտնի է միայն, որ «Ինը վարիացիան» տպագրվել է 1782 թվականին Դրեսսլերի մահվանից երեք տարի հետո:

Մեր ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ Դրեսսլերի և նրա ստեղծագործությունների մասին տեղեկությունները շատ քիչ են, բառացիորեն մեկ, երկու պարբերություն:



Էռնստ Քրիստոֆ Դրեսսլերը (1734-1779 թթ.) իր դարաշրջանի առաջավոր մտավորականներից մեկն էր: Սովորել էր աստվածաբանություն, իրավագիտություն և գերմանական պոեզիա՝ Հալլեի, Յենի, Լայպցիգի համալսարաններում: Երաժշտությամբ սկսել էր զբաղվել Լայպցիգում՝ սովորելով ջութակ նվագել և երգել: Աշխատել է որպես կամերային երաժիշտ և երգիչ Վեցլարի, Վիեննայի և Կասսելի պալատական օպերային թատրոններում:

Դրեսսլերի երաժշտական ժառանգությունը կազմում են երգերի երկու ժողովածու և երեք երաժշտատեսական ուսումնասիրությունները: Չնայած, որ Դրեսսլերը մասնագիտորեն չէր զբաղվում երաժշտությամբ, այդուհանդերձ հետաքրքրվում էր, գերմանական ազգային օպերայի հարցերով: Իր երաժշտատեսական աշխատություններում նա քաջալերում էր գերմանական օպերայի ստեղծման փորձերը, այն օպերայի, որը անկախ կլիներ իտալական օպերայից: Այդ նպատակի համար, ըստ Դրեսսլերի, անհրաժեշտ էր գերմանիայում հիմնավոր օպերային թատրոնների ստեղծումը:

Մեր ուսումնասիրած նյութերում նշվում է, որ քայլերը գործիքային ստեղծագործությունից է վերցված: Քանի որ, Դրեսսլերի հեղինակային նոտաները չհաջողվեց գտնել, մենք կարող ենք կասկածի տակ առնել նման եզրահանգումը: Ելնելով այն իրողությունից, որ Դրեսսլերը մեծավասա՞մբ վոկալ ստեղծագործությունների հեղինակ է և գործիքային ստեղծագործության օրինակ մեզ հայտնի չէ, ենթադրում ենք, որ Բեթհովենի վարիացիայի թեման ևս վոկալ ստեղծագործություն էր:

Երկար փնտրտուքի արդյունքում գտանք Դրեսսլերի մի երգի նոտային օրինակ, որը մեզ կօգնի մոտավոր պատկերացում կազմել Դրեսսլեր-կոմպոզիտորի ստեղծագործական ոճի մասին:

Երգը վերնագրված է այսպես. «Երգ՝ նվիրված բոլոր եղբայրներին և հատուկ պահպանված օթյակներին»: Հավանաբար, երգի տեքստը նույնպես գրել է Դրեսսլերը, քանզի նա նաև պոետ էր և երգի տիտղոսաթերթին այլ բանաստեղծի անուն նշված չէ: Եզրակացնելով երգի բովանդակությունից և հրատարակության նշանների խորհրդաբանությունից՝ պարզ է դառնում, որ Դրեսսլերը, ինչպես այդ շրջանի բազմաթիվ մտավորականներ, ովքեր հարում էին «Փոթորիկ և մորիկ» գեղարվեստական շարժմանը, եղել են մասոնական օթյակի անդամ: Հայտնի է, որ մասոնական օթյակների անդամներ են եղել Հայդնը, Մոցարտը, Բեթհովենը: Մեր կարծիքով, այդ օթյակներից մեկին հարել է նաև Էռնստ Դրեսսլերը:

Երգի մեր կողմից գերմաներենից թարգմանված տեքստն այսպիսինն է.

Հեռու - պարում է օդում փետուրը խաղող
Գինոված և կեղծ քնքշությամբ.
Երգեր եղբայրներ ավելի հաճախ

Երգերը մեր փախուստի.
Չուր մի պղծեք սիրախաղով
Կրակոտ բնազդներով
Գինու կարմիր Աստծով և նրա կեղծ սիրով:

Հեռու գառանցանք, նուրբ հրծվանք
Որից փախչում են ազնվականները
Խիստ հոնքերով, աչքերում մեր վեհություն
Փայլում էին Սուրբ կրակով
Լսվում էր օդում երգը՝ չարածծի
Թույլ չենք տա այլևս երեք անպատվեն մեր
հողերն ու տաճարները:

(թարգմանությունը՝ Մարգարիտա Հակոբյանի)

Այս ստեղծագործության կառուցվածքը պարզ երկմասանի է: Այստեղ օգտագործված է դասական պարզ հարմոնիա: Առաջին նախադասությունը՝ շնորհիվ օստինատային բասի ավելի զուսպ երաժշտական կերպար է ստեղծում: Իսկ երկրորդ նախադասությունը որպես կուլմինացիոն մաս, աչքի է ընկնում մետրառիթմիկ լարվածությամբ, որը ստեղծվում է ռիթմական պատկերի կոտորակմամբ:

Դրեսսլերի այս երգի և քայլերգի թեմայի միջև ակնհայտորեն երևում են և՛ ընդհանրություններ, և՛ որոշ տարբերություններ: Որպես ընդհանրության օրինակ կարող ենք նշել երկու ստեղծագործությունների առաջին մասերում աչքի ընկնող (քայլերգի թեման նույնպես երկմասանի է) բասի հավասարաչափ ռիթմական պատկերը, որը երկու երկերին էլ տալիս է զուսպ հստակ նկարագիր: Սակայն, ի տարբերություն երգի թեմայի երկրորդ հատվածին, հակադրության տրամաբանությամբ, քայլերգի երկրորդ պարբերությունն ավելի քնարական բնույթ ունի, քան առաջին հատվածն իր քայլերգային ռիթմով:

Որպես ամփոփում կցանկանանք նշել, որ Էռնստ Դրեսսլերի մասին նույնիսկ գերմաներենով ուսումնասիրություն չգտանք: Սակայն այս երգի նոտաները մեզ թույլ տվեցին տեսնել, որ Դրեսսլերն իր ուրույն ոճն ունեցող կոմպոզիտոր էր, և ցավոք որպես առանձին ուսումնասիրության նյութ չի եղել երաժշտագետների ուշադրության կենտրոնում:

Այսպիսով, այս հոդվածը դառնալու է այն կոմպոզիտորներին նվիրված մեր ուսումնասիրությունների առաջին փորձը, որոնց անդրադարձել է Բեթհովենն իր վարիացիոն ցիկլներում:

ՄԻԼԵՆԱ ԶԱԼՅԱՆ
ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 2-րդ կուրս,
Ղեկավար՝ ԵՊԿ դոցենտ, արվեստագիտության
թեկնածու ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

...Ես ինչ դուր եմ գալիս... Լրանում է Շառլ Ազնավուրի ծննդյան 97 ամյակը

3 Մայրերն ամեն ինչ գեղեցկացնելու առանձնահատուկ ծիրը ունեն։ Ընտրելով նրանց, և հաճախ միայն նրանց համար, ծնված օրվանից մենք դառնում ենք առասպելական անձնավորություններ։

Իմ ճանապարհը հեշտ ու համգիստ չի եղել։ Շատ դառնություններ եմ ծաշակել այդ ճանապարհին. երեսիս փակված դռներ, հեզմանքով և արհամարանքով լի ժպիտներ. «Մի համառեք», «Ոչինչ չունենք ձեզ համար», «Թողեք ձեր հասցեն, կգրենք», «Ամեն պատահական մարդու վրա ժամանակ չունենք կորցնելու»...Ես ծաշակել եմ այդ բոլորը։ Շատերի նման կուլ եմ տվել թուքս, զսպել եմ արցունքներս ու կուչ եկել։ Շատերի նման զայրությանից պոռթկացել եմ եր-

Շառլ
Ազնավուր



բեմն, կոպտել եմ, կոպտել եմ ինձ։ Կասկածն ու հուսահատությունը, բախտ չունենալու զգացողությունը հաճախ եմ գետնել ինձ, բայց ցավս թաքցրել եմ, քաշվել եմ պատյանիս մեջ և ուժ հավաքել դիմանալու, պայքարելու համար...

Ի վերջո, դժվար կյանքս ու խաբված սերերս եմ, որ ինձ դարձրին այն, ինչ կամ ու համարձակվում եմ ասել, թող դա ինքնագովություն չթվա՝ ես ինձ դուր եմ գալիս։

ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՐ

Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՐԹՅԱՆԸ
Շառլ Ազնավուրի «Ազնավուրը Ազնավուրի մասին» գրքից

Անցկացվեց հայ կոմպոզիտորական արվեստի 12-րդ փառատոնը

1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը մայիսի 4-22-ը անցկացվեց «Հայ կոմպոզիտորական արվեստի» 12-րդ փառատոնը։

Փառատոնի զվեսվոր նպատակը հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածումն է ունենդրի լայն շրջանակներում, հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների ծայնագրումը, տեսագրումը, նոտաների թվայնացումը և պահպանումը։ Փառատոնը նաև հնարավորություն է ստեղծում հայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների հնչեցման համար։ Փառատոնի համերգային երեկոներին հանդես են գալիս մենակատարներ՝ Հայաստանից և արտասահմանից՝ ընդգրկելով իրենց երկացանկում հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ։ Յուրաքանչյուր տարի փառատոնը նվիրվում է հայ անվանի կոմպոզիտորներից մեկին։ 2021 թվականը հորեյանաշատ տարի է հայ կոմպոզիտորների համար՝ 2021 թվականին լրանում է Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյակը, Առնո Բաբաջանյանի, Ադամ Խուրդյանի, Էդվարդ Միրզոյանի 100-ամյակները, Ջոն Տեր-Թադևոսյանի 95-ամյակը, մեր ժամանակակիցներից Միխայիլ Կոկոժակի 75-ամյակը, Երվանդ Երկանյանի 70-ամյակը և այլն։ Այս տարվա փառատոնի շրջանակում անդրադարձ կատարվեց հորեյանը ճշող կոմպոզիտորներին՝ ներկայացնելով նրանց՝ երկար տարիներ չհնչած ստեղծագործությունները, որոնք թվայնացման և կրկին ներկայացման կարիք ունեին։ Ներկայացվեցին նաև մեր օրերում գրված մի շարք մեծակտավ ստեղծագործություններ, որոնք հնչեցին առաջին անգամ։ Հայ կոմպոզիտորական արվեստի 12-րդ փառատոնը ներառում էր 3 համերգային երեկո. հնչեցին Ալեքսանդր Սպենդիարյանի, Առնո Բաբաջանյանի, Ղազարոս Սարյանի, Ադամ Խուրդյանի, Ջոն Տեր-Թադևոսյանի, Հայկ Բոյաջյանի, Երվանդ Երկանյանի, Միխայիլ Կոկոժակի սիմֆոնիկ ստեղծագործությունները, կոնցերտները։ Փառատոնի շրջանակում՝ համերգներին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ ունեցան ջութակահար Հայկ Կազաբյանը և թավջութակահար Արամ Թալալյանը։ Սիմֆոնիկ համերգները ղեկավարեցին դիրիժորներ Սերգեյ Սմբատյանը, Ռուբեն Ասատրյանը և Վահագն Պապյանը։ Երկար տարիների պատմություն ունեցող հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների և ներկայիս ձեռքբերումների պահպանությանն ուղղված այս ծրագրի կազմակերպիչը՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, անցած տասը տարիների ընթացքում անցկացրել է հետևյալ համերգաշարերը՝ «Սարյան-Ֆեստ» (2010 թ.), «Բաբաջանյան-Ֆեստ» (2011 թ.), «Չուխաճյան-Ֆեստ» (2012 թ.), «Ռոմանոս Մելիքյան-Ֆեստ» (2013 թ.), «Տերտերյան-Ֆեստ» (2014 թ., 2019 թ.), «Էդգար Յովհաննիսյան-Ֆեստ» (2015 թ.), «Միրզոյան-Ֆեստ» (2016 թ.), «Հարո Ստեփանյան-Ֆեստ» (2017 թ.), «Գրիգոր Եղիազարյան-Ֆեստ» (2018 թ.), «Ալեքսանդր Հա-



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սերգեյ Սմբատյան



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը դիրիժոր՝ Վահագն Պապյանի ղեկավարությամբ

րությունյան-Ֆեստ» (2020 թ.)։

Մայիսի 4-ին՝ Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ Հայ կոմպոզիտորական արվեստի 12-րդ փառատոնի բացման համերգը։ Հնչեցին Ղազարոս Սարյանի «Պասակալիան» սիմֆոնիկ նվագախմբի համար, Առնո Բաբաջանյանի ջութակի Կոնցերտը (մենակատար՝ Հայկ Կազաբյան, ջութակ) և Ջիվան Տեր-Թադևոսյանի 1-ին Սիմֆոնիան՝ դիրիժոր Վահագն Պապյանի ղեկավարությամբ։

Փառատոնի շրջանակներում երկրորդ սիմֆոնիկ համերգը տեղի ունեցավ մայիսի 17-ին, որը ղեկավարում էր նվագախմբի գեղարվեստական ղեկավար և զվեսվոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը։

Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյա հորեյանի առիթով հնչեցին կոմպոզիտորի սիմֆոնիկ ստեղծագործություններից։ Համերգային ծրագրի մեկնարկին ներկայացվեց նրա երկար տարիներ չհնչած Կոնցերտային նախերգանքը, այնուհետև՝ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը։

Համերգի ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ներկայացրեց Երվանդ Երկանյանի 7-րդ Սիմֆոնիայի պրեմիերան։ Այս տարին հորեյանական է նաև Երվանդ Երկանյանի համար. նշվում է կոմպոզիտորի 70-ամյակը։ Սիմֆոնիայի կատարումը կոմպոզիտորը և դիրի-

ժորը նվիրեցին 44-օրյա պատերազմում նահատակված հերոսների հիշատակին։

Փառատոնի փակման գալա-համերգը մեկնարկեց Հայկ Բոյաջյանի թավջութակի եռամաս Կոնցերտի պրեմիերայով։ Փարիզում ծնված կոմպոզիտորը իր այս ստեղծագործության մասին ասել է. «Իմ եռամաս թավջութակի Կոնցերտն իր խորքում մի քանի տարրերի միաձուլում է։ Դրանք սկիզբ են առնում իմ կյանքի մշակութային արմատներից. ես նախ և առաջ ծագումով հայ եմ, ապա ֆրանսիացի եմ՝ ըստ ծննդավայրի և արգենտինացի՝ իմ անձի ձևավորման առումով, քանի որ պատանեկությունս անցել է Բուենոս Այրեսի արվարձանում։ Դրանից հետո միայն՝ քսաներկու տարեկանից ապրել եմ ԱՄՆ-ում։ Այս ազդեցություններից է մշտապես հղկվել իմ երաժշտական լեզուն։ Իմ ստեղծագործությունների մեծ մասում արևելյան ու արևմտյան ավանդույթները փոխակերպվում են այնպիսի երաժշտական լեզվի, որ բնորոշ է հենց իմ ներաշխարհին»։

Հնչեց նաև Ադամ Խուրդյանի թավջութակի 2-րդ Կոնցերտը, որը հայ կոմպոզիտորական դպրոցի ամենադրամատիկ կոնցերտներից մեկն է։

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն առաջին անգամ հնչեցրեց Մարտին Ուլիխսանյանի «Լամենտո» ստեղծագործությունը թավջութակի և լարային նվագախմբի համար, որը նվիրված է Արցախյան պատերազմում նահատակված հերոսների մայրերին։

Երեկոյի ընթացքում նվագախմբի հետ ելույթ ունեցավ թավջութակահար Արամ Թալալյանը։

Համերգային ծրագիրն ամփոփվեց ևս մեկ պրեմիերայով. հնչեց անվանի կոմպոզիտոր Միխայիլ Կոկոժակի «Ալպիական դիմակահանդես» սիմֆոնիկ պատկերը, որը հեղինակը գրել է երեք տարի առաջ։

Համերգը ղեկավարում էր դիրիժոր Ռուբեն Ասատրյանը, որը, խոսելով Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի նշանակության մասին, շեշտեց, որ այն մեծ դեր է կատարում մեր մշակութային կյանքում։ Պարոն Ասատրյանը նշեց, որ խորհրդային տարիներին բոլոր հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները ծայնագրվում ու պահպանվում էին, ինչի շնորհիվ մեր կոմպոզիտորական դպրոցը մեծ ճանաչում ձեռք բերեց։ Խորհրդային տարիներից հետո այս ասպարեզում վակուում էր առաջացել։ Այժմ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբը, նախաձեռնելով Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, շարունակում է այդ արժեքավոր գործը։ Դիրիժորը ընդգծում է այն փաստը, որ փառատոնի շրջանակներում բազմաթիվ պրեմիերաներ են ներկայացվում։ Ստեղծագործություններն անպայման պետք է բեմ բարձրանան, հակառակ դեպքում հավասարազոր են չգրվելու։ Ըստ Ռուբեն Ասատրյանի՝ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները կատարելը հայրենասիրության դրսևորում է։

Նյութը քաղված է՝ <https://escs.am/am/news/8560>
և <https://b24.am/ կայքերից>

Հնագույն երաժշտության «Տաղարան» անսամբլի համերգը

Մայիսի 12-ին Երևանի Կոմիտասի անվ. Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ Հնագույն երաժշտության «Տաղարան» անսամբլի համերգը, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սեդրակ Երկանյան։ Երեկոյի ընթացքում հնչեցին ժողովրդական երգերի մշակումներ՝ անսամբլի և մեներգիչների՝ հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիրներ՝ Լուսինե Մարկոսյանի, Արսեն Ստեփանյանի, Հովսեփ Նշանյանի, Գալինա Յուլիկյանի, Հովհաննես Կարապետյանի և Գայանե Ղազարյանի, ինչպես նաև անսամբլի մենակատարների՝ բլուլահար Հասմիկ Մուրադյան-Հարությունյանի, ուղահար Լուսինե Դավոյանի, դուդուկահար Արտակ Ասատրյանի, սանթուրահար Քրիստինե Մնացականյանի, քանոնահար՝ Մարիաննա Գևորգյանի կատարմամբ։ Հատկանշական էր այն, որ կատարվեցին քիչ հայտնի ժողովրդական երգերի մշակումներ, այդ իսկ պատճառով թվարկում



Հնագույն երաժշտության «Տաղարան» անսամբլ, Գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սեդրակ Երկանյան

ենք երգերի անունները՝ «Նարե», «Հայ, ջանե», «Ջան, տնավեր ավանցի», «Լուսնյակն էլավ», «Դե, քելե, քելե», «Կրկնակի գյուղեր», «Նաներ, նաներ», «Արցախի կոխի նվագ», «Լե, լե, լե, լե Թամզարա», «Ձի խաղացնելու նվագ», «Սահարի», «Ալագյազը բարձր սար է», «Շատախից Բարսեղ», «Թիլլարա», «Լուսնակ գիշեր», «Փիզ պար», «Ես քեզ ինչ տամ», «Բալկոնը պըրտի», «Հարսի ու թագվորի մոմերով պար», «Կլոր պար», «Երգումի պար», «Այ, սիրուն կաքավ», «Հընդը», «Թաքվորի մեր...»։

Իրենց հայեցի կատարումներով առանձնացան հատկապես՝ Լուսինե Մարկոսյանը և մենակատար արական երգիչները։ Սեդրակ Երկանյանի հավաստմամբ թեմատիկ համերգները լինելու են շարունակական և սույն համերգը թվով երրորդն էր։

Խմբագրական

«Պատերազմն ստիպեց աշխատել ավելի շատ, քան երբեք»

Պատերազմից հետո Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում նոր հուշատախտակ է ավելացել՝ զոհված ուսանողների անուններով՝ Գոռ Թումանյան, Տիգրան Սահակյան, Գագիկ Խաչատուրյան, Միկե Փոթոյան, Տիգրան Հարությունյան, Հենրիկ Ասատրյան։ «*Լուսավոր, տաղանդավոր ուսանողներ էին՝ մեծ հեռանկարով*» - ասում է կոնսերվատորիայի Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Արմեն Բաղդասարյանը։

Հուշատախտակից բացի՝ մի նոր պատառ ևս ավելացել է։ Այն ազդարարում է, որ 2021-ը կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյակն է։ Պատերազմից հետո ամենաբարդ, թերևս, աշխատելու մոտիվացիա ունենալն է։ Կոնսերվատորիա իր աշխատանքային ընթացքում է։

Արմեն Բաղդասարյանը կոնսերվատորիայում պրոռեկտորի պաշտոնը ստանձնել էր 2020-ի սեպտեմբերի 1-ին։ Աշխատանքի 27-րդ օրը, որը նաև իր ծննդյան օրն էր, սկսվեց պատերազմը։

- Երևի հենց պատերազմն էր, որ ստիպեց աշխատել ավելի շատ, քան երբեք աշխատել ենք։ Եթե ամեն մեկն իր տեղում է և անում է իր գործը, նշանակում է պետությունը կա։ Պատերազմի օրերին մեր ուսանողներն օպերատիվ շտաբ ձևավորեցին. օգնություն էին հավաքում, փոխանցում ռազմաճակատին։ Կոնսերվատորիայի օպերային ստուդիայի բեմը վերածվել էր ցանցեր գործող արհեստանոցի. գիշեր-ցերեկ, հերթափոխով, աշխատակիցները, ուսանողները ցանցեր էին գործում։ Պատերազմից հետո, դեկտեմբերի 22-ին, կոնսերվատորիան բարեգործական համերգ կազմակերպեց՝ «Համերգ երախտիքի» խորագրով։ Սոստ մեկ միլիոն դրամ հավաքվեց, փոխանցեցինք Ձիծառայողների ապահովագրության հիմնադրամին։ Սա սովորական համերգ չէր, մարդիկ ոչ թե դրամ էին վճարում, որ ներկա գտնվեն համերգին, այլ գումար էին վճարում, որը փոխանցվելու էր Ձիծառայողների հիմնադրամին, իսկ նրանց փոխարեն համերգի ունկնդիրը լինելու էին պատերազմի մասնակից զինծառայողները և կամավորները։ Պարտոգրքալ բան են ասելու. երանի հիմա լիներ այն համերաշխությունը, որ կար պատերազմի օրերին։ Ափսոսում եմ, որ այդ համերաշխությունը փշովեց հաղթանակի հույսի, սպասումների հետ։ Հասարակությունը ծայրահեղ պառակտված է, ագրեսիայի մի անհանդուրժելի չափաբաժին կա։

Աշխարհի պատմությունը պատերազմների պատմություն է։ Հին աշխարհից այսօր ստեղծված մշակույթը՝ գրականություն, երաժշտություն, նկարչություն..., մի տեսակ անգոր չի՞ թվում. մարդը, կարծես, նախնական բնագոյային մակարդակում է։

Ժամանակակից աշխարհում հոգևորը գիշել է դիրքերը։ Տեխնիկայի և սպառողականության դար է։ Մարդը մի ակնթարթում ուզում է ստանալ առավելագույն արդյունք, առավելագույն հաճույք։ Սովորել ենք մեկ քիչով մեծ ծավալի ինֆորմացիա ստանալ։ Արվեստն այսօր, ցավոք, իր առջև չի դնում խնդիրներ, որոնք կլուծեր։ Արվեստի, մշակույթի բուհերը առավելապես մեծ անելիք ունեն, որ արվեստը վերադարձնի իրեն վերապահվող առաքելությունը։ Ինչ վերաբերում է կոնսերվատորիային, ապա վերջին երկու-երեք տարիներին բովանդակային առումով ահեղի աշխատանք է կատարվել ուսումնական ծրագրերի արդիականացման, թարմացման ուղղությամբ։ 2021 թվականը բուհի համար շատ խորհրդանշական տարի է՝ նշում ենք հիմնադրման հարյուրամյակը։ Կրթական հաստատության համար սա պատկառելի տարիք է, պատմություն։ Մենք ունեցանք նոր վիզուալ իմբություն՝ նոր տարբերանշան՝ նոր ասելիքով։ Կոմիտասի գրաֆիկական պատկերն է, որը նաև մետրոնոմ է հիշեցնում. Կոմիտասի ամբողջ ժառանգությունն է, այդ ժառանգության ժամանակագրությունը՝ մեկ խորհրդանշական պատկերում։ Հաշվետու տարի է. գրեթե բոլոր ամբիոնները համերգներ են կազմակերպում՝ նվիրված հարյուրամյակին։

Հարյուր տարին տպավորիչ թիվ է։ Այսօր ինչո՞վ է չափվում այդ թիվը, ի՞նչ արդյունքով։

Կոնսերվատորիայի տարիքը երևում է այն սերունդներով, որոնք կրթվել են, այն անուններով, որոնք տվել է, այն ազգային դպրոցով, որը մշակվել է այստեղ։ Մի խոսքով՝ այն ամենով, ինչն ամրագրել է Հայաստանի տեղը համաշխարհային մշակութային քարտեզին։

Մշակույթը ոչ միայն քառակարգված գործընթաց է, այլև անընդհատ պրոցես՝ արվեստի բոլոր տեսակների համար։ Առանց պետության չի կարող լինել ամբողջական, պրոֆեսիոնալ արվեստ։ Պետության բացակայության կամ ժողովրդի ընդհանուր իմունիտետի բացակայության պայմաններում արվեստի շատ տեսակներ, ամբողջ ժանրեր անհետանում են։ Օրինակ՝ առանց պետության՝ դժվար է պատկերացնել օպերային թատրոն։ Պետական համակարգն այսօր այնքան էլ գործունակ չէ։ Ինչպե՞ս է դա ազդում կոնսերվատորիայի, օպերային ստուդիայի գործունեության վրա։

Ենթադրում եմ, որ պետության համար մեր ոլորտը կարևոր է։ Իհարկե, ունենալով ՊՈԱԿ-ի կազմաիրավական

ծև՝ կոնսերվատորիան բազմաթիվ բարդությունների և սահմանափակումների է հանդիպում, այդ թվում՝ ֆինանսական, և ունենալով, օրինակ, այնպիսի էական ենթակառուցվածքներ, ինչպիսիք են ժամանակակից ծայնագրման ստուդիան, օպերային ստուդիայի դահլիճը, այլ դահլիճներ՝ մենք չենք կարող դրանք օգտագործել առևտրային նպատակներով, որը թույլ կտար լուծել ինչ-ինչ խնդիրներ։ Այդ պակասը փորձում ենք այլընտրանքային ռեսուրսով լրացնել։ Շուրջ երկու տարի գործում է Կոնսերվատորիայի բարեկամների հիմնադրամը, որը զգալի աջակցություն է ցուցաբերում կոնսերվատորիային։ Անցած տարի, համավարակով պայմանավորված, շատերը պարտադրված պարապորդի մատնվեցին, և շատ ուսանողներ վճարի խնդիրներ ունեցան։ Հիմնադրամն իր վրա վերցրեց որոշ ուսանողների վարձը, նաև պլանշետներ գնեց այն ուսանողների համար, ովքեր դրա կարիքն ունեին ու չէին կարողանում մասնակցել հեռավար դասերին։ Օպերային ստուդիայում այսօր բավականին աշխույժ տնօրինություն է գործում՝ ի դեմս տնօրեն՝ Հայկ Վարդանյանի և գեղարվեստական ղեկավար՝ Հասմիկ Պապյանի։ Տիկին Պապյանի շնորհիվ զգալի գումար հավաքվեց, որը ծառայեց օպերային ստուդիայի առաջնային կարիքներին։ Եթե մնայինք միայն պետության աջակցության հույսին, գուցե չկարողանայինք իրագործել այն բոլոր նախագծերը, որոնք մասամբ իրագործում ենք։ Հասկանում ենք՝ պատերազմից հետո պետությունն ինքն էլ բազմաթիվ խնդիրներ ունի։

Կոնսերվատորիան ջանք է թափում, կրթում է ուսանողներին, սակայն Հայաստանում, կարծես, չկա այն միջավայրը, որն ավելի տեսանելի դարձնի այդ ջանքերի արդյունքը։ Ուսանողներն ավարտում են ու մեկնում Հայաստանից՝ մասնագիտական ոլորտում աշխատանք փնտրելու։

Այդ շրջանավարտների ինչ-որ տոկոս դրսում է՝ մասնագիտական աշխատանքով զբաղվել կարողանալու համար։ Բայց նաև կան պրոֆեսիոնալ մասնագետներ, որոնք արտերկրում ունեցած բավականին մեծ հաջողություններից հետո հաստատվել են հայրենիքում և այսօր նպաստում են կոնսերվատորիայի զարգացմանը։ Այդ մարդկանց թվում են ուսումնական գծով պրոռեկտոր, կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանը, ով Շվեյցարիայում 15 տարի ապրելուց և ստեղծագործելուց հետո վերադարձավ և միացավ ղեկավար կազմին, Հասմիկ Պապյանը, որի համաշխարհային կարիերային ծանոթ են բոլորը, կոմպոզիտոր Արթուր Ալշեյլյանը, որը նույնպես Շվեյցարիայից է վերադարձել և այսօր դասավանդում է բուհում։ Իհարկե, մեր հնարավորությունների սահմաններում փորձում ենք մեր երկրում ստեղծել աշխատանքային հեռանկարներ մեր ուսանողների համար։ Կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյակն առիթ էր՝ համագործակցելու մայրաքաղաքի խոշորագույն՝ Արամ Խաչատրյան, Աննո Բաբաջանյան համերգարահների, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի թանգարանների հետ։ Անում ենք այնպես, որ մեր ուսանողներն ուսման ընթացքում կարողանան հանդես գալ նշան բեմերում։ Փորձում ենք համախմբել բոլոր տարիների մեր շրջանավարտներին և հեռակարգում ցանկանում ենք ստեղծել կարիերայի կենտրոն։ Մայիսի 7-ին, առաջին անգամ կոնսերվատորիայի պատմության մեջ, Շրջանավարտի օրը մշեցինք։ Օրը պատահական չէր ընտրված, խորհրդանշական էր՝ մայիսը տարվա 5-րդ ամիսն է, հնգագծի գաղափարն է, 7-ն էլ՝ նոտաների թիվ։ Ամեն տարի, այդ օրը նշելու ենք որպես Շրջանավարտի օր, և դա հաշվետվության մի հանգրվան կլինի՝ հավաքելու բոլոր շրջանավարտներին, ներառելու նրանց մեր զարգացման գործընթացներին՝ դասավանդման, գիտական աշխատանքի, հովանավորության իմաստով։

Պատերազմում մեր պարտությունը նաև այն պատճառով էր, որ իրականությունը տեսնել չէինք ուզում կամ փախչում էինք իրականությունից։ Փոքրացնեց մասշտաբները. տեսնո՞ւմ եք կոնսերվատորիայի իրական խնդիրները, թե՛ այս դեպքում ևս բարդ է առեքստվել իրականությանը։

Փորձում ենք իրատեսական դիրքերից մայել, շտկել թերությունները։ Անձամբ ինձ օգնում է այն, որ երաժիշտ չեմ և շատ խնդիրների մայում եմ արտաքին աչքով։ Ունենք խնդիրներ՝ իհարկե։ Ամենամեծ խնդիրն այն է, որ կոնսերվատորիայի շենքը 1960-ականների սկզբին կառուցվելուց ի վեր (կոնսերվատորիան 1969-ին է տեղափոխվել այս շենք - *խմբ.*) երբևէ չի հիմնանորոգվել։ Ունենք գործիքային կազմը թարմացնելու խնդիր։ Այսօր այս երկու ուղղություններով ակտիվ աշխատանք է տանում երկու ծրագրերի պատասխանատու Գևորգ Մնացականյանը։ Պատրաստ է շենքի հիմնանորոգման նախագծահաշվարկային փաթեթը, աշխատանքներ են ընթանում դոմոր կազմակերպություններ գտնելու ուղղությամբ։ Գործիքների մասով ունենք յոթ տասնյակը գերազանցող գործիքների և արեստուարների ցանկ, դիմելու ենք ճապոնիայի կառավարության դրամաշնորհային ծրագրին։ Իսկ բովանդակային մասով՝ փոքրիկ հետաքննությունը ցույց տվեց, որ մեր ուսանողներն օտար լեզուների տիրապետման խնդիր ունեն։ Նույն խնդիրն ունի նաև աշխատակիցների մի զգալի տոկոսը։ Կա մտայնու-

թյուն, որ եթե երաժիշտ ես և տիրապետում ես «երաժշտության լեզվին», այլ լեզուներ իմանալու անհրաժեշտություն չկա։ Եթե ուզում ենք, որ մեր կրթությունն արտահանվի կամ մեր կրթական ծրագրերը միջազգայնացվեն, որ մեր ուսանողները մասնակցեն շարժունության ծրագրերին, լեզուների տիրապետումը պետք է շատ բարձր մակարդակի վրա լինի։ Լուծումներ ենք փնտրում, քանի որ առարկայական ծրագրերը հազեցած են, ինչը բարդացնում է օտար լեզուների ժամերի ավելացումը։ Եվս մեկ լուրջ խնդիր՝ եվրոպական որոշ բուհեր հետաքրքրված չեն մեր տարածաշրջանով, մեր երկրով՝ մեր երկրի բուհերի հետ գործընկերություն զարգացնելու համար։ Ձանքեր ենք գործադրում՝ կոտրելու կարծրատիպերը։ Նաև անելիք ունենք երկրի ներքին կյանքում։ Մենք ոչ միայն պիտի վերցնենք, այլև տանք։ Ներքին՝ հասարակական կյանքում հանրային գործընկերության զարգացում ենք փորձում զարգացնել։ Կոնսերվատորիան՝ որպես բուհ, միայն վայր չէ, որտեղ կրթություն են տալիս կամ ստանում, այլ պիտի լինի վայր, որտեղ լուծվեն հանրային կարևորության հարցեր՝ կրթություն ստացողների և փոխանցողների ջանքերով։ Քիչ առաջ նշածս «Համերգ երախտիքի» նախաձեռնությունն այդպիսի հանրային գործընկերության փայլուն օրինակ էր, կարողացանք օգտակար լինել այն ձևով, որով կարող ենք։

Հայաստանում այսօր ամեն հաջորդ օրն անկանխատեսելի է, հեռանկարի առումով մեծ լավատեսություն չկա, կոտրված ենք բարոյապես, ֆիզիկապես։ Այս տրամադրությամբ արդյունավետ աշխատելը բարդ է։ Այդպե՞ս է։

Կարո՞ղ են շտապ օգնության աշխատակիցները, ուսուցիչներն իրենց թույլ տալ հարցնել՝ եթե երկրում հեռանկար չկա, ինչո՞ւ եմ անում այս գործը։ Եթե ամեն մարդ դադարի անել այն, ինչ անում է, երկիրը կդադարի գոյություն ունենալ, կանգ կառնի։ Այդպես պետք է մայել իրերի զարգացմանը։ Շատ ծանր շրջան է, բայց չի նշանակում, թե պետք է թևաթափ լինենք կամ սպասենք՝ է՛լ ինչ արհավիրքներ պիտի մեզ պատուհասեն, որ վերջնականապես դադարենք գոյություն ունենալուց։ Չէ՞, եղպես չի՞ լինի, դիմադրողականություն պիտի լինի. պետությունն էլ օրգանիզմ է, որ բնական դիմադրողականություն պիտի ունենա։ Եթե պետական ինստիտուտները, կրթական հաստատություններն այդ դիմադրողականությունը չկարողացան ապահովել, ուրեմն ի՞նչ պետության, պետականության մասին ենք խոսում։ Հակառակը, գուցե պիտի բազմապատկենք մեր ջանքերը՝ յուրաքանչյուրս՝ մեր տեղում, որպեսզի եղած խնդիրները կարողանանք լուծել, որ չափով մեզվից են կախված։ Պետությունը, պետականությունը միայն այդպես կպահենք։

Նյութը քաղված է <https://hetq.am/hy/article/131091?fbclid=IwAR04bZhgSկայքից>

= Հեռափոխ փաստեր



Հայաստանի ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանի արցախցի տատիկն ու պապիկն են քանդակված

54 տարի առաջ Ստեփանակերտի մուտքի մոտ՝ բարձունքներից մեկում, վեր խոյացավ Արցախ աշխարհը խորհրդանշող «Տատիկ-պապիկ» արձանը։

1964 թ. իտալական Կարարա քաղաքում կազմակերպվեց համաշխարհային ցուցահանդես։ Նշանավոր հեղինակների արվեստի ստեղծագործությունների հետ միասին ցուցահանդեսում ներկայացված էին նաև վաստակավոր քանդակագործ, Հայաստանի ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր, բանաձորցի (Բանաձորը Հայրուծի շրջանի գյուղերից է) Սարգիս Բաղդասարյանի աշխատանքները։ Դրանց թվում էր նաև «Մենք ենք մեր սարերը» քանդակը։

Քչերը գիտեն, որ այդ քանդակում Բաղդասարյանը պատկերել է իր արցախցի տատին ու պապին։ Քանդակը «Մենք ենք, մեր սարերը» անունով է կնքել գրող, պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը։ Կոթող պատվանդան չունի։ Կարծես լեռնաբլուրը ճեղքվել է, և նրանք այդ ճեղքից բարձրացել, կանգնել են՝ ոտքերն ամուր դրած հայրենի հողի մեջ։

Խմբագրական

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀՎՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



❖ Մայիսի 19-ին Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում տեղի է ունեցել Արցախյան 44-օրյա պատերազմի հետո, ԵՊԿ ուսանող Սողոմոն Վարդանյանի հիշատակի համերգը: Կրթահամալիրի սովորողները, շրջանավարտները, դասախոսները և ԵՊԿ կամերային գործիքային ամբիոնի ուսանողներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Սողոմոն Վարդանյանին:

❖ Խաչատուր Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի քանոնահարների տարեկերջյան քննական ելույթը տեղի ունեցավ 2021 թվականի մայիսի 13-ին, համալսարանի փոքր դահլիճում, ղեկավար՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր՝ Հասմիկ Լեյլոյան: Քանոնահարները հանդես եկան «Ձվաթընոց» անսամբլի անունով, որը ստեղծվել է 2016 թվականին, քանոնի դասարանի ուսանողների բազայի վրա, երաժշտության ամբիոնի դասախոս՝ Հասմիկ Լեյլոյանի նախաձեռնությամբ:

Համերգի ընթացքում հնչեցին՝ Կոմիտասի, Ա. Խաչատուրյանի, Ա. Սպենդիարյանի, Սայաթ Նովայի, Ն. Պազանիկի, Ալբերիոնի, Տոնասոյի, Դուրյանյանի ստեղծագործություններից, ինչպես նաև հայկական ժողովրդական երգերի փոխադրումներ ու ունկնդրումներ:

Բացի ուսանողներից, ունկնդիր շաքերում էին հանրապետությունում ծանաչված երաժիշտներ, մանկավարժներ, լրագրողներ: Համերգի վերջում նրանցից ոմանք գովեստի խոսքեր շնայեցին երիտասարդ կատարողների հասցեին և շնորհակալական խոսքեր հղելով նրանց ղեկավարին, հարածանոթ քանոնահարուհի և մանկավարժ Հասմիկ Լեյլոյանին, ում աշխատանքն իրապես ակնառու:



Հասմիկ Լեյլոյանն իր ուսանողների և համերգի հյուրերի հետ

էր: Այդչափ հաջող և պրոֆեսիոնալ կատարումներից գոհ էր նաև Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի ղեկան, ծանաչված երաժիշտ և կոմպոզիտոր՝ Արա Գևորգյանը:

«Ձվաթընոց» անսամբլի անդրանիկ ելույթը տեղի է ունեցել համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի մեծ դահլիճում: Այնուհետև նրանք շարունակեցին կատարումներով հանդես գալ տարբեր միջոցառումների շրջանակներում՝ Կոմպոզիտորների միության, Առնո Բաբաջանյանի անվան, Կամերային տան, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի դահլիճներում: «Ձվաթընոց» քանոնահարների անսամբլը վերածնունդ միջազգային մրցույթի Գրան պրի մրցանակակիր է: Տպավորիչ համերգը համոզիչ մեկնարկ էր արդեն ծրագրված համերգաշարի, որոնք տեղի կունենան հանրապետության մի շարք բուհական հաստատություններում:

❖ Մայիսի 30-ին, Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի ունեցավ Երևանի Կոմիտասի անվ. պետական



ԵՊԿ կամերային գործիքային ամբիոնի 2020-2021 թթ. ուսումնական տարվա շրջանավարտների համերգը

կոմպոզիտորիայի կամերային գործիքային ամբիոնի 2020-2021 թթ. ուսումնական տարվա շրջանավարտների համերգը: Այն նվիրված էր ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին: Ծրագրում՝ հայ և արևմտաեվրոպական կոմպոզիտորների կամերային ստեղծագործություններ էին:

❖ «Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոմպոզիտորիայի



Մարիաննա Հայրապետյան (կոմպոզիտոր), Ջոյա Սարգսյան


ակադեմիական երգեցողության բաժնի 4-րդ կուրսի ուսանող՝ Ջոյա Սարգսյանի (դասախոս՝ Լիլի Մարկոսյան) դասական երաժշտության երեկոն: Միջոցառմանը հնչեցին ռուս, հայ և արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ: Կոմպոզիտորներն էր Մարիաննա Հայրապետյանը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

❖ ԵՊԿ փողայի բաժնի (ֆլեյտա) 1-ին կուրսի ուսանող



Կոյա Գրիգորյան



Ասյա Ջանունց

դուհի Ասյա Ջանունցը (պրոֆեսոր Գայանե Մուրադյանի դասարան) «Մոցարտ-2021» 2-րդ միջազգային մրցույթում արժանացել է 1-ին մրցանակին, իսկ «Տոկիո-2021» միջազգային առջանց մրցույթում 2-րդ մրցանակին, փողային բաժնի (կլառնետ) 1-ին կուրսի ուսանող Կոյա Գրիգորյանին (դոցենտ Սևադա Շահոյանի դասարան) «Մոցարտ-2021» 2-րդ միջազգային և «Տոկիո-2021» միջազգային առջանց մրցույթներում Գրան Պրիի արժանանալու համար:

❖ Կոմպոզիտոր Դավիթ Բալասանյանը 12th Piano Fidelio Composition Competition մրցույթի Minimalist/ Experimental/ New Age անվանակարգում արժանացել է առաջին մրցանակի: Ինչպես նշում է կոմպոզիտորը, մրցույթին մասնակցել են 17 երկրից 39 հեղինակներ՝ ներկայացնելով 58 ստեղծագործու-



թյուն: Դավիթ Բալասանյանի "Circular" ստեղծագործությունը ձայնագրվել է 2020 թվականին Կոմիտասի թանգարան ինստիտուտում՝ ANM Artist նախագծի շրջանակներում: 2019 թ. Դ. Բալասանյանը նույն մրցույթի ջազային և ատոմալ անվանակարգերում արժանացել էր 2-րդ և 3-րդ մրցանակների: Նրա մենահամերգի ամբողջական տարբերակը շուտով հասանելի կլինի համացանցում, որին կարող եք հետևել նախապես բաժանորդագրվելով Armenian National Music-ի յուրօրյան ալիքին:

❖ ԵՊԿ ուսանողներն Ուկրաինայի Խարկով քաղաքում անցկացվող «Ամադեուս» կոնցերտմայստրների միջազգային 10-րդ մրցույթին արժանացել են մրցանակային տեղերի. Դաշնամուրային ֆակուլտետի կոնցերտմայստրու-



ԵՊԿ դաշնամուրային ֆակուլտետի կոնցերտմայստրության ամբիոնի դասախոսները և մրցանակակիր ուսանողները

թյան ամբիոնի ուսանողներ՝ Մարինե Մկրտչյանը C տարիքային խմբում արժանացել է 2-րդ մրցանակի (դասատու՝ ԵՊԿ պրոֆեսոր Ս. Մաղաքյան), D տարիքային խմբում Տաթև Մանուկյանը արժանացել է 1-ին, Ռուզաննա Խասապետյանը՝ 3-րդ մրցանակի (դասատու՝ ԵՊԿ պրոֆեսոր Գ. Թորոյան), մրցույթի Գրան պրիին է արժանացել Շահանե Աղաբալյանը (դասատու՝ ԵՊԿ պրոֆեսոր Ս. Գյուլբուրդյան):

❖ ԵՊԿ ուսանողները Մոսկվայում անցկացվող Խոսե Կարերաս Գրան պրի դասական վոկալի միջազգային 2-րդ մրցույթում զբաղեցրել են մրցանակային տեղեր «Ռուս կոմպոզիտորի ստեղծագործության լավագույն կատարման համար» մրցույթի օտարերկրյա մասնակցի կողմից՝ հատուկ մրցանակի և «Լավագույն սոպրանո» անվանակարգում երկրորդ մրցանակի է արժանացել Լիլիթ Դավթյանը (դասախոս՝ Լ. Մարկոսյան) իսկ «Լավագույն բարիտոն» անվանակարգում 3-



Լիլիթ Դավթյան, <...>




Սարգիս Բաթբունկ-Մելիքյան, <...>



Նավասարդ Հակոբյան, <...>

րդ մրցանակի է արժանացել Նավասարդ Հակոբյանը (պրոֆեսոր Ս. Կոլոսարյանի մասնագիտական դասարան): ԵՊԿ շրջանավարտ Սարգիս Բաթբունկ-Մելիքյանը «Լավագույն բաս» անվանակարգում նույնպես երրորդն է:

❖ Կատարողական արվեստի համաշխարհային ասոցիացիայի կողմից դասական երգարվեստի միջազգային տարբեր մրցույթներում ու փառատոներում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար «Կոմիտաս» երգչախմբի մենակատար Անդրանիկ Մալխասյանը պարգևատրվել է «Ամադեուս» ոսկե մեդալով:



Անդրանիկ Մալխասյան

Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ


Անկապվեց Է. Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետական 8-րդ մրցույթը

Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ, մայիսի 10-13-ը կայացավ մեծամուն կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանի անունը կրող պատանի կոմպոզիտորների հանրապետական ամենամյա 8-րդ մրցույթը: Այն իրականացվեց է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի և Երևանի պետական կոնսերվատորիայի գործընկերությամբ: Այս տարի մրցույթին մասնակցելու իրավունք էին ստացել 13 հայազգի պատանի կոմպոզիտոր Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ֆրանսիայից, ովքեր, բաժանվելով երկու տարիքային խմբերի, ներկայացրել են իրենց ստեղծագործությունները:

Մրցույթի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ մայիսի 10-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Ելույթ ունեցավ Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ: Նույն օրը բեմում հանդես եկան մի շարք հայապետական մրցույթի հաղթողները:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Միրզոյանական մրցույթին իրավունք ունեին մասնակցելու մինչև 18 տարեկան հայազգի ստեղծագործողներ՝ ընդգրկվելով տարիքային երկու խմբերում: Կրտսեր խմբի ներկայացուցիչները (մինչև 13 տարեկան) պետք է ներկայացնեին 1 ստեղծագործություն՝ գրված ցանկացած գործիքի համար (առավելագույնը՝ 10 րոպե տևողությամբ), իսկ ավագ խմբի մասնակիցները (14-18 տարեկան)՝ մինչև 4 գործիքի համար գրված 1 ստեղծագործություն (առավելագույնը՝ 15 րոպե տևողությամբ):

Մ ա յ ի ս ի 11-ին Կոմպոզիտորների միությունում կայացան երկու տարիքային խմբերի մրցույթային փուլերը: Մայիսի 12-ին, Էդվարդ Միրզոյանի ծննդյան օրը, մրցույթի մասնակիցները, ինչպես նաև մրցույթի հանձնախմբի անդամները, մի խումբ արվեստագետներ, պետական պաշտոնյաներ այցելեցին Կոմիտասի անվ. Պանթեոն և ծաղիկներ խոնարհեցին Մեծն կոմպոզիտորի՝ Էդվարդ Միրզոյանի շիրիմին: Մայիսի 13-ին տեղի, Հայաստանի կոմպոզիտորների միության համերգասրահում մրցույթի մրցանակաբաշխությունն ու Գալա համերգը: Կրտսեր խմբում հաղթողի կոչմանն է արժանացել Մերի Առակյանը (դաս.Նարինե Մխիթարյան), իսկ ավագ խմբում՝ Էդգար Մխիթարյանը (դաս.Մարիա Ղուկասյան): Ավագ խմբից 2-րդ և 3-րդ հորիզոնականները զբաղեցրել են համապատասխանաբար Էդուարդ Ալեքսանյանը ու Էմիլի Դովիան-Միսյանը (Ֆրանսիա), իսկ կրտսեր խմբից՝ Արաքս Աշխարհյանը և Ալեքս Գևորգյանը: Հանդիսատեսի համակրանք անվա-



Մրցույթի մասնակիցներից Ալեքս Գևորգյանը ծաղիկներ է խոնարհում Է. Միրզոյանի շիրիմին




Արթուր Ավանեսով, Մարտին Վարդապարյան, Արամ Սաթյան, Արամ Դովիան-Միսյան, Էդուարդ Միրզոյանի անվ. մրցույթի պատանի մասնակիցները

նակարգի հաղթողն է Մերի Առակյանը: Բոլոր պատանիները պարգևատրվել են պատվոգրերով, խրախուսական նվերներով, ինչպես նաև հնարավորություն են ստացել անվճար ծայնագրվելու Երևանի պետական կոնսերվատորիայի ակուստիկ լաբորատորիայում, իսկ մրցանակային հորիզոնականներ զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են նաև անվանական գավաթներով: Այս ամենից զատ՝ երկու խմբերի հաղթողներն ստացել են դրամական պարգևներ: Դրամական խրախուսանքով պարգևատրվել են նաև մրցանակային հորիզոնականներ զբաղեցրած մասնակիցների ուսուցիչները:


Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆԸ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր


ՀՀ ԳԱՄ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր Աննա Արևշատյանի «Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դարեր» մենագրությունը, որը նվիրված է Կոստանդնուպոլսում ստեղծագործած հայ երաժիշտ-տեսաբաններին, որոնք կարևոր դերակատարում են ունեցել հայ ազգային մասնագիտացված երաժշտական արվեստի զարգացման գործում: Հատկապես նշանակալի է նրանց ներդրումը Նոր ժամանակի հայ ազգային երաժշտատեսական մտքի ձևավորման մեջ: Գ. Գալասյանի, Հ. Լիմոնջյանի, Ն. Թաշճյանի, Ե. Տնտեսյանի, Ա. Հիսարյանի աշխատություններում արծարծվել են հայ ավանդական երաժշտության բազմաթիվ խնդիրներ՝ ներառելով ինչպես եկեղեցական հոգևոր երգարվեստի տեսության, մասնավորապես խազագիտության հարցերը, այնպես էլ ավելի կատարյալ և նոր ժամանակների պահանջներին համապատասխանող նոտագրության ստեղծումը: Մենագրությունը հասցեագրված է ինչպես մասնագետ երաժշտագետներին, այնպես էլ հայ երաժշտության պատմության մասին հետաքրքիր ընթերցողներին: Գիրքը հրատարակվել է ՀՀ ԳԱՄ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, գիտական խմբագիրն է՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երևնակյանը: Համակարգչային էջադրումը կատարել է Վերա Պապյանը, կազմի ձևավորումը՝ Նվարդ Երկանյանի: Ի դեպ, կազմը ձևավորելիս օգտագործվել է Հ. Այվազովսկու «Կոստանդնուպոլիսը՝ Բոսֆորից» կտավը, 1856 թ., որտեղ պատկերված է Օթթաթիյ մզկիթը, ճարտարապետ՝ Նիկողոս Պալյան:



Հարթ տեսությունների և ուսմունքների ուսումնասիրության առումով: Համա Արևելցուն վերագրված սույն բնագիրն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ՝ բազմակողմանի երաժշտական բնությունը: Գիրքը նախատեսված է երաժշտագետների, հայ-արաբական միջնադարյան նշակության փոխառությունների ուսումնասիրության մեջ հետաքրքիրների և երաժշտական բուհերի ուսանողների համար: Տպագրվել է ՀՀ ԳԱՄ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, «Գիտություն» հրատարակչությունում: Գիտական խմբագիրն է՝ արվեստագիտության դոկտոր՝ Լևոն Հակոբյանը (Մոսկվա), գրախոսները՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Լիլիթ Երևնակյանը և արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Միքայիլ Երևնակյանը:



Վերահրատարակվել է Վարդան Ամալյանի՝ «Անվերնագիր» պատմվածքների ժողովածուն: Այն առաջին անգամ հրատարակվել է 2016 թվականին, Վ. Ամալյանի 15-ամյակի առթիվ, որի՝ Դավիթ Ամալյանի ջանքերով: Վարդան Ամալյանը 44-օրյա պատերազմի անմահացած հերոսներից է, ում մասին հրապարակախոս, սցենարիստ Լևոն Գալստյանն ասել է. «Սիրելի՛ Վարդան, դու ընդունված ընկալմամբ գրող չես, և դա շատ լավ է: Դու հանրային կյանքում դիրքավորված չես, թե իբր տեսք-տեսք՝ լուրջ մարդ եմ, գրող եմ... կամ մեծամամ գրող դառնամ... Դու իսկապես լուրջ մարդ ես, որովհետև, առանց հանդիսավոր կեցվածք ընդունելու, պարզ ու վճիռ ծայրով ընդամենը պատմում ես մեզ քո՝ պատմությունը՝ քո հոգևոր կենսագրության առաջին գողտրիկ դիպվածներից ու ընկալումներից հանելով միտք ու խոհ, տազմապ ու երազանք: Կեցցես, որ չես փորձում ընթերցողին դուր գալ, խնամքով ես վերաբերվում բառին, չես փորձում շքեցնել ոչ թեք, ոչ ընթերցողին: Ուրեմն՝ ճիշտ ճանապարհին ես»:



Ներկայացնում ենք «Մրջունը» պատմվածքը Վարդան Ամալյանի «Անվերնագիր» գրքույկից.

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՆՎԱՏՐԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ԳԻՏԱԴՐՈՒՄԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԼԿ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ, ԳՈՐԴՈՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՐԴՈՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ Անուշ ԿԻՐԱԿՈՅԱՆ (հայ.)
ՍՈՖԻ ԱՅՆԱԿՈՒՅԱՆ (ռուս.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԴՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 26.05.2021: Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՋԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը անթուղջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-
Yerevan-State-Conservatory-996490150508214/

